ԹՂԹԱԾՐԱՐ

ԱՐԵՒՄՏՅԱՆԻ ԸՄԲՈՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞ՆՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀՅԴ ԱՐԵՒՄՏՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Դավիթ Թորոսյան

Արեւմտյանի

Ըմբոստությունը

Ի՞նչ Տեղի Ունեցավ

ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի

Կազմակերպության մեջ

Հեղինակ

Դավիթ Թորոսյան

(ելեկտրոնային հրատարակություն, հունիս, 2024թ.)

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԻՆՉՈՒ ԱՅՍ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հ.Յ. Դաշնակցության պատմությունում տարբեր ժամանակների եւ տարբեր վայրերում օրվա ղեկավարության դեմ պատահել են ըմբոստացումներ եւ պայքարներ, որոնք Դաշնակցության պատմագրությունում ներկայացվել են որպես «անջատողական» շարժումներ: Սակայն այդ շարժումները հիմնականում միտուած են եղել կուսակցությունը բարեկարգելու եւ որոնք միշտ ալ աւարտած են Դաշնակցության կանոնագրային կարգապահական հասկացության տրամաբանությամբ:

Բոլոր անոնք, որոնք ծանոթ են Դաշնակցության պատմության, անպայման լսել են այդ շարժումների մասին: Անկախ իրենց ծաւալից կամ թողած ազդեցությունից, այդ շարժումները կամ ըմբոստացումները, հիմնականորեն գաղափարական տարակարծություններ չեն ունեցել կուսակցության հետ: Շարժառիթները եղել են տարբեր, բայց հիմնական խնդիրը եղել է կուսակցության գործելաձեւին կամ ղեկավարության դեմ պոռթկում:

Իր տեսակով եւ ծավալով, բայց նաեւ գաղափարական եւ քաղաքական հիմքեր ունենալու իր հատկությամբ, վերջին տարիների Միացյալ Նահանգների Արեւմտյան շրջանի ըմբոստացումը իւրահատուկ էր եւ իրոք որ հակադարձություն էր Հ.Յ.Դ. Բյուրոյի կողմից այդ շրջանին դեմ տարվող ավելի քան տասը տարիների հալածանքի քաղաքականության, որի վերջին արարը 2020-ի Դեկտեմբեր 27-ին Բյուրոյի կողմից Կ.Կ. նշանակելու ճարահատ եւ կոպիտ որոշումն էր։ Այս որոշումը շրջանի կուսակցականների ընդվզումին պատճառ հանդիսացաւ եւ զանոնք մղեց հայտնի 55րդ Շրջանային Ժողովը գումարելու եւ նոր Կեդրոնական Կոմիտե ընտրելու։

Դաշնակցական պատմության եւ հուշագրությունների հարուստ գրականութեան գոյությամբ հանդերձ, ցաւով պետք է ընդգծել որ անցյալին պատահած շարժումների պատմության, այդ օրերի պատահած իրավիճակների եւ մթնոլորտի մասին գրաւոր յիշատակություններ համարեա չկան։ Այս աշխատության նպատակն է արձանագրել փաստերը եւ լույս սփռել հատկապես վերջին տարիներին ԱՄՆում պատահած այդ ըմբոստացումին վրայ, ինչպես նաեւ փորձել արձանագրել 2020 Դեկտեմբերի նախորդած տարիների իրադարձությունները եւ այդ շարժման հետեւանքով ստեղծուած կացությունը եւ դեպքերը։

Աշխատությունը ակադեմական չըլլալով հանդերձ, ճիգ չխնայեցինք առաւելագույն չափով փաստերը մեկտեղել, հանդիպումներ ունենալ եւ հաղորդակցիլ բոլոր կողմերու դերակատարների հետ, լսել անոնց

վկայությունները, ինչպես նաեւ մամուլի եւ առհասարակ այս պատմության հետ առընչվող բոլոր հայտարարություններն ու կոչերը իբրեւ վաւերաթուղթ նկատի ունենալ։ Միաժամանակ «Արեւմտյանի հարց»ի տեւողության շրջանին (Դեկտեմբեր 2020-Սեպտեմբեր 2023) հաղորդակցած ենք կողմերից տասէ ավելի անմիջական դերակատարների հետ եւ հասկնալի պատճառներով յանձնառու ենք որ անոնց ինքնութիւնը մնայ խորհրդապահական։

Վերջապես, նման շարժումներ եւս մաս են կազմում Հ.Յ.Դ. պատմության եւ նրա ճշգրիտ իրազեկումը կրնայ ուսանելի լինել ապագայի համար։

Պետք է նշել որ ԱՄՆում պատահած այդ շարժումը այնքան բազմաշերտ է եւ դեպքերի ընթացքը այնքան արագ, որ խճճված մի պատկեր է ներկայացնում եւ այս պատճառով ամբողջական ու անթերի աշխատություն ներկայացնելու հավակնությունը չունենք։ Պարզապես այս փոքր եւ համեստ աշխատությունը կարող է հիմք ծառայել ապագային ավելի ծավալուն մի աշխատութեան։ Ու եթե որոշ դեպքեր կամ մանրամասնություններ ակամայից մոռացուած են, թող ներվի մեզի։

Հեղինակ

Դաւիթ Թորոսյան

ԱՐԵՒՄՏՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

(ՀԱԿԻՐՃ ԱԿՆԱՐԿ)

ԱՄՆ-ի Արեւմտյան ափի հայկական գաղութը սկսել է ձեւավորվել 1880-ական թվականներից։ Առաջին հասնողները եկել են Արեւելյան Ամերիկայից, խույս տալով գործարանային կյանքից եւ օգտվելով Քալիֆորնիայի եւ մանաւանդ Ֆրեզնոյի բարեբեր հողից, լծվել են գյուղատնտեսական աշխատանքի։ Այս մասին գրում է «Կոչնակ» շաբաթաթերթը. «Գործարանների աշխատանքից ձանձրացած, հուսակտուր հայրենիք դառնալու փափազից՝ հայ ժողովուրդը նոր տեղ, նոր գործ էր փնտրում» «Կոչնակ», 1900, թիւ 2: 1896-ի համիտյան ջարդերից հետո խուսափելով օսմանյան բռնություններից, Արեւմտյան Հայաստանից, մասնավորաբար Խարբերդից, Մարզվանից եւ Եոզկաթից, սկսվում է գաղթ դեպի Քալիֆորնիա, որում դերակատար են լինում բողոքական կրոնավորները։ Ֆրեզնոյի պաշտոնական տվյալների համաձայն, 1901 թվականին այնտեղ ապրում էին հազար հայ, իսկ հաջորդ հինգ տարիների ընթացքում այդ թիվը կրկնապատկվում է։ Իսկ Արեւելյան Հայաստանից դեպի Քալիֆորնիա գաղթը սկսվում է 1900-ականների առաջին տարիներին, հիմնականում Կարսի եւ Շիրակի նահանգներից։ 1908-ին, Դաշնակցության ջանքերի շնորհիվ սկսվում է հրատարակվել «Ասպարեզ»ը, որպես շաբաթաթերթ։ 1910-ական թվականներին որոշ թվով

հայեր սկսում են հաստատվել նաեւ Լոս Անջելոս եւ 1922-ին հիմնվում է Ս. Խաչ եկեղեցին։

Երկրորդ մեծ հոսքը դեպի Արեւմտյան Ամերիկա տեղի է ունենում նախ Բալկանյան պատերազմների եւ ապա Հայկական Ցեղասպանությունից եւ Հայաստանի անկախության անկումից հետո 1912-1921 թվականներին։ Այս մասին »Հայրենիք» ամսագիրը գրում է. «Հայերու Քալիֆորնիա գալը մեծ համեմատություններ առած է վերջերս։ Կու գան ամեն կողմերե, թե՛ Մ. Նահանգներե եւ թե՛ երկիրեն։ Կու գան անհաշիվ ու տարերային կերպով... Շատերը կը ծախեն տուն ու հաստատված գործը ու կու գան։ Ուրիշներ առանց դրամի կուգան»։ 1930 թվականի ԱՄՆ-ի հերթական մարդահամարի տվյալներով Կալիֆորնիայում ապրում էր 12.379 հայ։ «Փարոս» ամսաթերթի համաձայն՝ 1927 թվականին Կալիֆորնիայում ապրում էր 16 000 հայ։

Թեպետ դանդաղ, բայց դեպի Արեւմտյան Ամերիկա գաղթը շարունակվել է նաեւ 1920ականներից հետո։ 1950-ական թվականներին Անթիլիասի կաթողիկոսությունը ստեղծում է իր թեմը, որ զարկ է տալիս եկեղեցական-հոգեւոր կյանքին։

1970-ական թվականներին, նախ Լիբանանի քաղաքացիական պատերազմի բռնկումով, ապա Իրանում պատահած իսլամական հեղափոխության հետեւանքով, Միջին Արեւելքից մեծ գաղթ է կատարվում դեպի Կալիֆորնիա։ Այս գաղթը երկարում է տարիների վրա՝ մինչեւ 1990-ական թվականների սկիզբը։ 1991-ին, պաշտոնական տվյալներով

Արեւմտյան Ամերիկայում հայության թիվը կազմում էր 115 000, իսկ ոչ պաշտոնական՝ 300 000: Թվերի այս տարբերությունը բացատրվում է այն հանգամանքով, որ մարդահամարի ժամանակ, շատերը չեն նշել իրենց ազգային պատկանելիությունը:

1991-ին, Հայաստանի անկախացումից հետո, սկսվում է նոր եւ մեծ հոսք դեպի ԱՄՆ-ը եւ մասնավորաբար Կալիֆորնիա: Թեպետ պաշտոնական տվյալներ չկան, բայց ներկայումս գաղութի թիվը գնահատվում է մոտավորապես մեկ միլիոնով: Այնտեղ գործում են ավելի քան 30 եկեղեցիներ, (Էջմիածնի եւ Անթիլիասի Առաքելական թեմերը, Կաթողիկե եւ Ավետարանական եկեղեցիները): Տարբեր կուսակցությունների եւ հարանվանությունների պատկանող ավելի քան 15 դպրոցներ: Հայկական դպրոցներ հաճախող հայ աշակերտության թիվը 7000-ը չի անցնում: «Ասպարեզ» օրաթերթի կողքին հրատարակվում են մի քանի շաբաթաթերթեր եւ պարբերականներ, թե՛ հայերենով, եւ թե՛ անգլերենով:

2019-ից ի վեր գործում է PAC-ը (Pan Armenian Congress), որ համախմբում է գաղութում գործող 27 կազմակերպությունների (կուսակցություններ, միություններ, հարանվանություններ եւ այլն) : PAC-ը յուրահատուկ մի կառույց է ի տարբերություն այլ գաղութներում գոյություն ունեցող նմանօրինակ կազմակերպությունների: Նրա կազմավորմանը հիմնական դերակատարություն է ունեցել Արեւմտյանի Կ.Կոմիտեն:

Գաղութի ամենակազմակերպված միավորը ՀՅԴ-ի կառույցն է: Շրջանը հաշվում է ավելի քան 1400 անդամ: Ունի 17 կոմիտեություն եւ մեկ ուսանողական միություն՝ «Շանթ», որ վերջին տասը տարիներին գործունյա միավոր չէ եւ գտնվում է ամլացած վիճակում: Կուսակցությունը ունի իր երիտասարդական թեւը՝ Հ.Ե.Դ-ը եւ պատանեկան միությունը: Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը (Հ.Ե.Դ.) մոտիկ անցյալում ունեցել է շուրջ 500 անդամ, իսկ ներկայիս գործոն անդամների թիվը հազիվ 100 է:: Կուսակցության ուղեկից միությունները՝ Համազգային Մշակութային Միությունը, Հ.Օ.Մ.-ը եւ Հ.Մ.Ը.Մ.-ը նույնպես ներկայություն են գաղութում եւ գործոն մասնակցություն ունեն գաղութային կեանքում:

ՆԱԽԱԲԱՆ

-

ՀՅԴ Բիւրոն, դեկտեմբերի 27-ին հաղորդագրությամբ հանրության հայտնում էր Արեւմտյան Ամերիկայի Հայ Յեղափոխական Դաշնակցության Կ.Կ.-ի նոր կազմը։ Այս քայլը ինքնին խնդրահարույց էր, որովհետեւ պատմության մեջ նախընթաց չի եղել, որ բյուրոն Կենդրոնական Կոմիտեի կազմության՝ այս դեպքում նշանակման մասին հանդես գա հայտարարությամբ։ Բյուրոյի այս քայլը ընդվզում է առաջացնում շրջանի կուսակցական շրջանակներում։ Նախատեսված Շրջանային Ժողովի համար արդեն իսկ պատգամավորները ընտրվել էին։ Մերժելով ենթարկվել բյուրոյի որոշմանը, հաջորդ օրն իսկ, 2020 թվականի դեկտեմբեր 28-ին, Արեւմտյանի պատգամավորները գումարում են 55-րդ Շրջանային Ժողովը եւ ընտրում են Կենդրոնական Կոմիտե։ Հակոտնյա այս երկու իրադարձությունների հետեւանքով Դաշնակցության մեծ ընտանիքը այտնվում է կազմակերպական տագնապի առաջ։

Հպանցիկ մի ակնարկով եթէ նայենք հայ թե օտար կուսակցությունների պատմությանը, պիտի նկատենք, որ նույնիսկ միանձնյա կերպով ղեկավարվող կուսակցություններում պատահել են ըմբոստացումներ, հակառակ ուղղությամբ գնացող հոսանքներ կամ անջատողական դրսեւորումներ։ Հակադիր հոսանքների միջեւ առկա տարակարծությունները շատ հաճախ հանգեցնում են կուսակցությունների երկփեղկմանը կամ կուսակցության քայքայմանը։

Պատմության մեջ բազմաթիվ օրինակներ կան: Նույնիսկ հայկական իրականության մեջ մոտակա անցյալում ականատես ենք դարձել նման երեւույթների: Իսկ բոլոր այն կուսակցությունները, որոնք հաջողել են հաղթահարել նման փորձությունները, բռնապետական թե ժողովրդավարական կերպով, անպայման թուլացած են դուրս եկել այդ ցնցումներից:

Հայ ժողովրդի վերջին հարյուր հիսուն տարիների պատմությանը ծանոթացող որեւէ անհատ չի կարող չհաստատել Հայ Յեղափոխական Դաշնակցության առանցքային դերակատարությունը հայ կյանքում: Ինչ էլ լինի դիտորդի տեսանկյունը, ինչպիսի արժեւորում էլ տրվի այդ կազմակերպության ընդհանուր գործունեությանը կամ նրա դերակատարության զանազան երեսներին, ուսումնասիրողը կամ դիտորդը առարկայականորեն պիտի հաստատի թե Հ Յ Դաշնակցության ազդեցությունը մեծ է եղել հայ իրականության մեջ, հավանաբար ավելի ազդեցիկ, քան որեւէ այլ կազմակերպության դերը:

Հետեւաբար, անդրադառնալով Հ Յ Դաշնակցության պատմությանը, նշանակում է վերջին 135 տարիներին հայ ժողովրդի պատմության մաս կազմող կարեւորագույն երեսներից մեկը քննարկել: Ամբողջական քննարկումը պահանջում է, որ ուսումնասիրվի ոչ միայն նրա իրարահաջորդ ղեկավարությունների գործունեությունը, այլ նաեւ նրա կազմակերպական կյանքի որոշ հոլովույթները, հատկապես նրա

շարքերում գոյություն ունեցող խմորումներին եւ շարժումներին, որոնք վերջին հաշվով մեծ ազդեցություն են թողել նրա ընթացքի վրա։

Ներքին այդ շարժումները շատ անգամ ղեկավարության հասնելու համար մղված պայքարներ են եղել եւ ընտրական բնույթ ունեցել, սակայն անառարկելիորեն իրանց ազդեցությունն են թողել իրարահաջորդ ղեկավարությունների կազմաւորման գործում եւ կուսակցության հետագա ուղղության վրա։ Ընդունված մոտեցումը (հատկապես կուսակցական մտաւորականության կողմից ներկայացված պատմության մեջ), այն է թե այս շարժումները միշտ էլ դիտվել են «հաջողված» կամ «ձախողված» որակումներով։ Եւ որովհետեւ կազմակերպությունը շարունակել է գոյություն ունենալ եւ այդպես էլ «անսասան» մնալ, բոլոր ներքին շարժումները նկատվել են «ձախողված» եւ զարգացել է այն թյուր կարծիքը, թե նրանք բոլորն էլ վերջիվերջո դատապարտված են «ձախողության» (կամ միշտ էլ «ձախողվում են»)։ Բնականաբար նկատի չի առնվում թէ պատմականորեն բոլոր շարժումներն էլ անխտիր – նրանցից ոմանք նաեւ ըմբոստության տեսքով – որպես նպատակ ունեցել են կազմակերպության ընթացքին վրա ազդել կամ ներգործություն թողնել եւ ոչ թե այն քանդել։ Առ այդ, պետք է որոշ ժամանակի կտրվածքով դիտել այդ շարժումների ներգործության եւ ազդեցության չափը եւ ըստ այդմ նրանց հաջողության կամ ձախողության գնահատականը տալ։

Այսպես օրինակ, 2019-ի ՀՅԴ 32-րդ Ընդհանուր Ժողովին, Հրանտ Մարգարյանը, որը ուներ քվեների հստակ առավելություն, բայց ոչ մի

ցանկություն չուներ իր ազդեցությունը նվազեցնել կուսակցության կյանքում, այսուհանդերձ կամովին հեռացավ Բյուրոյի ներկայացուցչի իր պաշտոնից: Ո՞վ պիտի կարենա չափել ազդեցությունը այն շարժումին, որ 7-8 տարիների ընթացքում կուսակցության ներսում բարենորոգչական քայլեր էր առաջադրում եւ որի թիրախը նույնինքն Հրանտ Մարգարյանն էր: Նա գիտակից էր այս իրողության եւ 32-րդ Ընդհանուր Ժողովը օգտագործեց իր հին հաշիվները մաքրել այլոց ձեռամբ: Հրանտ Մարգարյանը իր ունեցած քվեներով 32-րդ Ընդհանուր Ժողովին պարտադրեց մի բանաձեւ, որով նորընտիր Բյուրոյի վրա պարտք էր դնում Արեւմտյանի խնդիրները «լուծել»: Դուրս գալով Բյուրոյի կազմից եւ կուլիսների հետեւում Բյուրոյի փաստացի ղեկավարը դառնալով, նա իր ուզած ձեւով վրեժ էր լուծում Արեւմտյանից՝ չկարողանալով շինծու թղթածրարով կարգապահական տնօրինումներ սահմանել Արեւմտյանի երեք պատգամավորների հանդեպ: Հրանտ Մարգարյանը 20 տարիների Բյուրոյի իր ներկայացուցչության ժամանակ հաջողել էր կուսակցության բոլոր կառույցները հպատակեցնել եւ հաստատել միանձնյա իշխանություն: Բացառություն էր մնում Արեւմտյանը: Իսկ Բյուրոյի նոր ներկայացուցիչը՝ Հակոբ Տեր-Խաչատուրյանը, որ տարածված կարծիքի համաձայն թույլ անհատականություն եւ անկարող ղեկավար էր եւ համարվում էր Հրանդ Մարգարյանի դրածոն, իր հեղինակության հաստատման գրավականը տեսնում էր 32-րդ Ընդհանուր Ժողովի բանաձեւի գործադրությամբ՝ Արեւմտյանը Բյուրոյին ենթարկելով: Հակոբ Տեր-Խաչատուրյանի այս վարքագիծը մեկնում էր նաեւ իր «ԵՍ»ից եւ

Արեւմտյանի հանդեպ ունեցած նրա նախատրամադրություններից եւ հակակրանքից:

Այս պարունակում էլ պիտի հասկանալ, որ Արեւմտյան Ամերիկայի այս ըմբոստացումը աննախընթաց չէր: Անցյալում, զանազան ժամանակաշրջաններում եւ տարբեր շրջաններում պատահել են Դաշնակցության օրվա ղեկավարության դեմ պոռթկումներ, երբեմն անհատական, երբեմն խմբակային: Ի տարբերութիւն այլ կուսակցությունների, Դաշնակցությունը ներքին կարգով եւ կարգապահական իր հասկացությամբ, հաջողել է հաղթահարել այդ շարժումները եւ մնալ մի եւ միասնական կազմակերպություն: Իր «Երկաթյա Կարգապահությունը», որով նա հատկանշվում է, հաջողել է կուռ պահել իր շարքերը եւ հակադիր հոսանքներն ու անջատողական շարժումները չեզոքացնել եւ կազմակերպությունը նվազագույն ցնցումներով դուրս բերել ստեղծված իրավիճակից: Թեպետ պատմության համար պիտի արձանագրել, որ բոլոր շարժումները անպայման իրանց դրոշմը թողել են թե՛ օրվա ղեկավարության գործունեության վրա, ե՛ւ թե առհասարակ Դաշնակցականների եւ մանավանդ հետագա սերունդների վրա: Սակայն, ինչպես նշեցինք, Արեւմտյանի շարժումը տարբեր էր մյուս բոլորից: Այդ շարժումը, որի ղեկավարները Բյուրոյի կողմից արտաքսվեցին կամ հեռացվեցին ՀՅԴ շարքերից, նույնինքն Բյուրոյի որոշումով վերամիացան շարքերին իրենց պատիժները չեղյալ համարվելով: Այս փաստը արդեն աննախընթաց երեւույթ է

Դաշնակցության պատմութան մեջ եւ կարող է դիտվել որպես դրական երեւույթ հետեւյալ պատճառներով.

1-Բյուրոն վերջին հաշվով, անուղղակիորեն ընդունեց իր տված որոշումի սխալ եւ ոչ-կառուցողական լինելու փաստը։ Այլապես ինչպե՞ս բացատրել այն «պարտությունը» որ պիտի կրեր հանրության առաջ։

2-Հայտնի դարձաւ, որ շարժումի բոլոր ղեկավարների եւ նրանց հետեւորդների հասցեին կատարված բոլոր զրպարտությունները սուտ եւ կեղծ էին։ Այլապես ինչպե՞ս բացատրել որ «դաւաճան» պիտակավորվածները վերադարձան Դաշնակցության շարքերը։

3-Բյուրոն վերահաստատեց կանոնագրի ապակենտրոնացյալ դրությունը, որ Արեւմտյանի հիմնական պահանջներից էր եւ ուրեմն նշանակում է, որ շարժումը հաղթանակել էր։

Արեւմտեանի այս ըմբոստացումը ուներ տարերային բնույթ։ Մի քանի կուսակցականների կամ մի խմբակի ըմբոստացումը չեղավ, այլ Շրջանային Ժողովի բոլոր մասնակիցներին եւ այդ մասնակիցների հետեւը կանգնող ու իրենց ընտրող կուսակցականների։ Ըմբոստացման պատճառով Բյուրոյի եւ բյուրոյական Կ.Կ.ի կողմից հեռացվածները կազմում էին ավելի քան 100 շարքային։ Այս պատճառով էլ շարժումը կուսակցական-կարգապահական որոշումներով չեղավ կասեցնել կամ լուծել, ինչպես պատահելած էր նախորդ այլ շարժումների պարագային։ Եթե նախորդ շարժումները ֆիզիկական հաշվեհարդարով կամ մի քանի պարագլուխների հեռացումով հրավոր էր եղել չեզոքացնել, նույնը

հնարավոր չեղավ կատարել Արեւմտյանի դեպքում։ Մյուս կողմից, Արեւմտյանի այս քայլը առաջին իսկ օրվանից անջատողական տրամադրություն չցուցաբերեց։ 55-րդ Շրջանային Ժողովի կողմից ընտրված Կենտրոնական Կոմիտեն թե՛ իր հայտարարություններով, եւ թե՛ գործնականորեն, միշտ պատրաստակամություն հայտնեց վերամիանալու մայր կառույցին՝ հարգելով կազմակերպական կանոնների հիմք հանդիսացող ապակենտրոնացյալ դրությունը եւ ժողովրդավարության սկզբունքները։ Կառույցին միանալու նրա ջանքերը ապացուցում ենմ որ շարժումը նախօրոք ծրագրված չէր եւ պարզապես բնական հակազդեցությունն էր Բյուրոյի կողմից Արեւմտյանի շրջանի դեմ տարվող քաղաքականության, որի վերջին արարը հանդիսացավ Բյուրոյի Կ.Կ. նշանակելու քայլը։ Դեկտեմբեր 2020-ին սկզբնավորության, արդեն իսկ ընթացավարտ Կ.Կ. կազմակերպական բոլոր քայլերին դիմել էր Շրջանային Ժողովի գումարման հաջողության համար, սակայն բախվել էր Բյուրոյի մերժողական կամ անորոշ պատասխաններին։

Այս տագնապը թեպետ կազմակերպականորեն իրար հակադրեց Արեւմտյանը եւ Բյուրոն, բայց խորքային առումով այն չի սահմանափակվում այդ շրջանով։ Տարիների եւ գուցե տասնամյակների վրա երկարող կուտակված կազմակերպական, քաղաքական-գաղափարական տագնապների եւ դրանց գործելաոճի, տարակարծությունների դրսեւորումն էր։ Կուսակցության ավանդական դարձած գործելաոճը եւ քաղաքականությունը բախվում էր ավելի ժամանակակից, ժամանակին համահունչ եւ ժամանակի պահանջներին

ընդառաջ գործելու Դաշնակցական մտահոգությունների, որոնք միմիայն Արեւմտյանի կուսակցականներից չէին գալիս: Դաշնակցության շարքերի մեջ մեծ թիվ են կազմում նրանք, որոնք դեմ էին կուսակցության ընդհանուր ուղեգիծին: Կուսակցական շարքերի մեջ ըմբոստությունը այլ շրջաններում հնարավոր էր եղել լռեցնել, հաճախ մեկուսացնելով եւ չեզոքացնելով ըմբոստները, երբեմն էլ դուրս դնելով կուսակցության շարքերից: Արեւմտյանի շրջանը մնում էր այդ ըմբոստների կամ ընդդիմադիրների վերջին ամրոցը:

Դեկտեմբերին 2020-ին Բյուրոյի Կ.Կ. նշանակելու որոշումը եւ Արեւմտյանի անհնազանդությունը դուռ բացեց տարատեսակ մեկնաբանությունների: Բնականաբար երկու կողմերն էլ իրենց քայլերը պիտի արդարացնեին կանոնագրային հիմնավորումներով եւ նրա հոդվածների եւ սկզբունքների բացատրություններով:

Հ.Յ.Դ. կանոնագիրը նշում է երկու կարեւոր կետ.

Ա – եթե անհաղթահարելի պայմանների բերումով հնարավոր չէ Շրջանային Ժողով գումարել, Կ.Կ.-ի գործունեության ժամանակաշրջանը Բյուրոյի հավանությամբ երկարաձգվում է մինչեւ բարենպաստ պայմանների ստեղծում:

Արեւմտյանի դեպքում այս դրույթը ի զորու չէր: Չկային Շրջանային Ժողով գումարելու անհաղթահարելի պայմաններ (պատերազմական վիճակ, կուսակցության դեմ հալածանք եւ այլն): ՀՅԴ Բյուրոն ամբողջությամբ շրջանցել էր հոդվածը: Բյուրոն տեղյակ էր, որ Շրջանային

Ժողովի նախապատրաստական աշխատանքները ավարտվել էին եւ կոմիտեությունների երկու երրորդը (Շրջանային Ժողով գումարելու համար կանոնագիրով պահանջված անհրաժեշտ թիվը) արդեն իսկ ընտրել էին իրենց պատգամավորները։ Այս հոդվածին հիմամբ, 28 Դեկտեմբեր 2020-ին գումարված 55-րդ Շրջանային Ժողովը կանոնագրային էր եւ նշանակման քայլը արդարացուցիչ չէր։

Բ – Բյուրոն Կ.Կ. կարող է նշանակել նաեւ երբ գործող Կ.Կ.ն աններելի կերպով շեղվել է կուսակցության ուղեգծից, չի գործադրել իր վրա դրված պարտավորությունները եւ այլն։ Այս դեպքում Բյուրոն լուծարում է Կ.Կ.-ի կազմը, առանց Շրջանային Ժողովի գումարման եւ նշանակում է նոր Կ.Կ. վեց ամսով, որի հիմնական պարտականությունը կլինի նոր Շրջանային Ժողովին պատրաստել շրջանը, որպեսզի նոր Կ.Կ. ընտրվի։

Արեւմտյանի Կ.Կ.ն իր վրա դրված թե՛նյութական թե՛ բարոյական պարտավորությունները կատարել էր եւ թերացումներ չէր արձանագրել։ Այդ վկայում է Շրջանային Ժողովի նախապատրաստության Բյուրոյի հավանությունը։

Կանոնագիրի վերոնշյալ այս երկու յոդվածները գործադրելի չէին Արեւմտյանի դէպքում։ Բյուրոն Կ.Կ. նշանակելու իր իրավասությունը չարաշահել էր, առանց արդարացուցիչ պատճառ ներկայացնելու։

ՀՅԴ Բյուրոն Արեւմտեանի շրջանում Կ.Կ. նշանակելու իր հայտարարությունը հիմնավորում է այսպես. «Հիմք ընդունելով

թագավարակի [Covid 19] հետ կապված Ամերիկայի Միացյալ Նահանգներում սաստկացող պայմանները եւ այդ պատճառով ժողովներ գումարելու պետական սահմանափակումները...»: Այս հիմնավորումը ավելի քան պատրվակ մըն էր: Շրջանային Ժողով գումարելու նախապատրաստական աշխատանքները ավարտել էին եւ ԱՄՆ-ի պատկան մարմինների հետ կատարվում էր համադրումի աշխատանք, որպեսզի պետականորեն արտոնելի պայմաններում հնարավոր լիներ ժողով գումարել: Եւ 2020 թ. Դեկտեմբերի 28-ին գումարված 55-րդ Շրջանային Ժողովը գումարվեց պետական պատկան մարմինների արտոնությամբ եւ գիտակցությամբ:

Հ.Յ.Դ. Բյուրոն պարտավոր էր նաեւ նկատի առնել Արեւմտյանի առանձնահատուկ պարագան: Ճիշդ է որ կուսակցության կանոնագիրը հիմնական ուղեցույցն է կազմակերպական մեքենայի խնդիրները լուծելու, սակայն կան իրավիճակներ, որոնք կարելի է շրջանցել, առանց հավելյալ բարդությունների: Բյուրոն քաջատեղեակ էր, որ ԱՄՆ-ի օրենքներով կազմակերպությունները պետք չէ ղեկավարվեն դրսից, իսկ Կ.Կ.-ի նշանակում էր հակադրվել երկրի օրենքներին: Հաջորդող էջերում ընթերցողին են ներկայացվելու այս ուղղությամբ մանրամասնություններ: Միայն պետք է ընդգծել, որ եթե Արեւմտյանի այս ըմբոստացումը չպատահեր, ապա կազմակերպության գոյությունը կարող էր վտանգվել ամբողջ ԱՄՆ-ի տարածքին:

Իսկ ամենակարեւորը՝ նկատի պիտի ունենալ ժամանակահատվածը: Այս նշանակումը տեղի էր ունենում Արցախյան 44 օրյա պատերազմի ծանր պարտությունից անմիջապես հետո: Հայությունը, թե՛ հայրենիքում եւ թե՛ սփյուռքում հուսախաբության, բարոյալքումի եւ հավաքական ընկճվածության մեջ էր հայտնվել: Դաշնակցությունը որպես համահայկական կազմակերպություն, նշանակալից դերակատարություն պետք է վերցներ իր ուսերի վրա հայությունը դուրս բերելու պարտության պատճառած բարոյալքումի հոգեվիճակից, նրա առաջ բանալով հույսի եւ հաղթանակի նոր հորիզոններ: Այս ծանր պարտականությունը ի վիճակի էր կատարելու միայն ՀՅԴ-ն եւ այն հաջողացնելու համար, Դաշնակցությունը առաջին հերթին իր ներքին խնդիրները, վեճերը եւ ինտրիգները մի կողմ պետք է դներ եւ իբրեւ համախումբ եւ կուռ կազմակերպություն խթան հանդիսանար հայ ժողովուրդի առաջ ծառացած խնդիրների լուծմանը: Դաշնակցության Բյուրոն իր այս քայլով կուսակցական-կազմակերպական կյանքը դարձնում էր խոցելի, ներքին վեճերի կարգավորումը գերադասում էր հայության շահերից: Նա ժամանակի եւ պայմանների գնահատումը ճիշդ ձեւով չէր կատարել եւ Դաշնակցությունը հայ ժողովուրդը առաջնորդող կուսակցություն լինելով հանդերձ, ոչ միայն իր առաքելության տերը չէր եղել, այլեւ կազմակերպականորեն անհիմն խնդիրների առաջ կանգնել էր, ջլատելով Դաշնակցականորեն հավաքաբար դիմագրավելու հայության համար այդ ողբերգական եւ դժվարին ժամանակաշրջանը:

Կարելի է հարց տալ Արեւմտյանի «ըմբոստացած» կուսակցականներին թե ինչո՞ւ Բյուրոյի ստեղծած տագնապը չփորձեցին լուծել կանոնագրային հիմունքներով։ Եթե Արեւմտյանի կուսակցականները հավակնում էին թե Շրջանային Ժողովի նախօրեին ունեին երկու երրորդ մեծամասնություն, ապա շատ դյուրությամբ կարելի էր ենթարկվել Բյուրոյի նշանակման քայլին եւ կարճ ժամանակ հետո, կոմիտեների մեծամասնությամբ նոր Շրջանային Ժողով պահանջել, որ ըստ Կանոնագիրի նախ կոմիտեների կանոնագրային իրավունքն է եւ նման պահանջի պարագային Կ.Կ.-ն ինքնաբերաբար համարվում է հրաժարյալ եւ նախապատրաստվում է նոր Շրջանային Ժողով։ Տեսականորեն կարելի էր նման քայլի դիմել։

Մեր զրոյցներու ժամանակ այս միտքը արծարծեցինք շարքայինների հետ, որոնք բոլորն ալ միակարծիք նույն տեսակետը հայտնեցին։ Առհասարակ Կ.Կ.-ների նշանակումին հաջորդում է տեղական կոմիտեների նշանակումներ, որի հետեւանքով նշանակյալ Կ.Կ.-ները շինծու մեծամասնություն են ստեղծում։ Նույն վիճակը կարող էր պատահել նաեւ Արեւմտյանում եւ կարելի պիտի չլիներ կազմակերպական կանոններու համաձայն տագնապը կանխարգիլել։ Իսկ եթե կոմիտեների նշանակում չկատարուեր, ապա կազմակերպական նոր քաշքշուք մը կարող էր ծայր տալ, որի հետեւանքները կարող էին շատ ավելի կործանարար լինել, քան այն ինչ որ պատահեցաւ։ Դեպքերի հոլովույթը, որ սկսած էր տարիներէ ի վեր, Կ.Կ.-ի նշանակումով կանգ պիտի չառներ։ Մի ամբողջ տասնամյակ Արեւմտյանը թիրախ ընտրած ՀՅԴ

Բյուրոն, ինչպես այլ շրջաններում, այստեղ եւս պիտի փորձէր ջլատել ամեն տեսակի ընդդիմություն:

Վերջին տասնամյակին Բյուրոյի կողմից հետեւողականորեն Արեւմտյանի շրջանը թիրախավորելու քաղաքականությունը, որ կազմակերպական եւ կարգապահական հասկացությամբ ընկալված եւ ընդունված էր շրջանի շարքայինների կողմից, վստահաբար Բյուրոյի մոտ կար այն համոզումը, որ Կ.Կ. նշանակելու իր այս քայլն էլ պիտի «մարսվի» եւ շրջանը իր բոլոր կարողականությամբ կանցնի իր վերահսկողության տակ: Ենթադրելի է, որ Բյուրոն չակնկալեց, որ Արեւմտյանը նման ըմբոստացման կդիմի եւ ամբողջ կազմակերպությունը կհայտնվի անբաղձալի իրականության առաջ: Չենք ուզում հակառակին էլ հավատալ:

Տագնապի սրացման եւ զարգացման մեջ դերակատար եղան նաեւ Դաշնակցության մնացյալ կազմակերպական շրջանները: Նրանք եւս բարոյական պարտավորություն ունեին հակադիր կողմերի տեսակետները կամրջելու եւ տագնապը կանխարգելելու կամ գոնե իր սաղմում պահելու եւ լուծելու: Դաշնակցական մեծ ընտանիքի մյուս անդամները եւս հաշտ աչքով չէին դիտում Արեւմտյանի ուռճացող հեղինակությունը:

Կազմակերպական խնդիրների առկայության պարագային էլ, հանուն Դաշնակցության, Բյուրոն պետք է նախաձեռնող լիներ երկխոսությամբ խնդիրները լուծելու, նախքան Դեկտեմբեր 28-ի

Շրջանային Ժողովը։ Խնդիրերը համապարփակ քննարկումի եւ լուծումների հանգելու լավագույն ճանապարհը մնում է երկխոսությունը, նույնիսկ Դաշնակցության մեջ, նրա «երկաթյա կարգապահության» գոյությամբ հանդերձ։

Այս բոլոր իրադարձությունները կարող էին մի դեպքում չպատահել, եթե Բյուրոյի անդամները Դաշնակցական համեստությամբ եւ հասկացությամբ մոտենային խնդիրներին։ Ակներեւ է, որ մեծ դեր են խաղացել անձնական փառասիրությունները (ambition), ԵՍ-ը հաստատելու ճիգը եւ հեղինակություն պարտադրելու ձգտումը։ Դաշնակցական նկարագրի հետ խոտոր համեմատող նկարագրային այս գծերը աղետաբեր եղան ամբողջ կուսակցության համար։

Ավելի քան երեք տարի տեւած այս տագնապը չպարփակվեց կազմակերպության ներսում։ Իր ծավալով եւ ստեղծած արձագանքով, դուրս եկավ Ամերիկայի սահմաններից եւ դարձավ հայ ժողովուրդի սեփականությունը եւ երկար ժամանակ պիտի մնա բոլորի հիշողության մեջ։ Հայ ժողովուրդի համար բախտորոշ մի հանգրվանում, շինծու այս տագնապը ավելի ջլատեց կուսակցությունը։

Կազմակերպական գետնի վրա, այս շարժումը անպայման իր դրական արձագանքները պիտի թողնի կուսակցության վրա։ Բազմաթիվ կուսակցականներ չձայնակցելով հանդերձ այս շարժումին, գաղափարականորեն կիսում էին նրա նպատակները։ Երկար ժամանակ դեռ նրա կայծերը խթան պիտի հանդիսանան Դաշնակցականներին, թե

պետք է վերադառնալ Դաշնակցության ինքնուրույն եւ ազատորեն գործելու ուղուն։

Արդյոք հնարավո՞ր էր այս տագնապը շրջանցել։ 2015-ից սկսյալ դեպքերի զարգացման հոլովույթը նկատի ունենալով կարելի է միանաշանակ ՈՉ ասել։ Այս կհաստատեն նաեւ բոլոր նրանք, որոնց հետ մեր զրույցների ընթացքում հայտնեցին միեւնույն միտքը, թե Բյուրոյի քաղաքականության նպատակը Արեւմտեան շրջանը ամբողջությամբ վերահսկելի դարձնելն էր, իսկ Կ.Կ. նշանակելու քայլը այդ նպատակին հասնելու առաջին քայլը։ Բյուրոյի անդամների մոտ բացակայեց Դաշնակցական համեստությամբ եւ հասկացությամբ հարցերին մոտենալու մտասեւեռումը։

Այս շարժումը կանխամտածված չլինելու պատճառով, հեռակա ծրագիր կամ ուղեցույց չուներ։ Շարժման մասնակից անդամները շարունակեցին դաշնակցականի իրենց ընթացիկ աշխատանքները։ Մինչեւ անգամ այդ շարժման զորակցող կուսակցականները, ոչ մի դեպքում, թե՛ մամուլով եւ թե՛ ընկերային ցանցերի վրա քարոզչական աշխատանք չտարան այս ըմբոստացումը արդարացնելու համար։ Ուրիշ պարագայի, գուցե այս փաստը դիտվի որպես թերություն, բայց Դաշնակցության ծանոթ ամեն ոք հասկնանում է, որ դաշնակցական շարքայինները եւս համբերությամբ եւ գիտակցությամբ սպասեցին խնդրի Դաշնակցական լուծումին։

Եւ ամենից էականը։ Ի տարբերություն Դաշնակցության պատմության մեջ պատահած այլ շարժումների, այս շարժումը հրահրված եւ ֆինանսավորված չէր արտաքին ուժերի կողմից։ Շարժումից տարիներ առաջ, Դաշնակցության քաղաքական գործակից եւ Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի հովանավորությունը վայելող Հայաստանյան մամուլը սկսել էր հրապարակայնացնել Արեւմտյանի խնդիրները, այն ներկայացնելով որպես Հրանտ Մարգարյան-Վիգեն Հովսեփյան մենամարտ։ Շարժումը պարտադրանք եղաւ Արեւմտյանի համար։ Ի սկզբանե Դաշնակցականների մի պոռթկում էր եւ մնաց դաշնակցականության շրջագծից ներս, որի շնորհիվ էլ հետագայում հնարավոր եղաւ երկար բանակցություններից հետո վերամիանալ մայր կառույցին։

Առաջին օրվանից բանակցությունները երկու կողմերի համար էլ դժվար եւ սկզբունքային եղան։ Բյուրոյի կողմից զիջումները ցույց տվեցին, որ Արեւմտյանի Կ.Կ.-ն օրինավոր մարմին էր եւ հակառակ նրա դեմ կատարված անիրավություններին մնացած էր անղրդվելի։ Բանակցությունների վերջին փուլին Արեւմտյանը որոշ զիջումներ կատարեց բանակցային իր պայմաններից, սակայն հիմնական պահանջները մնացին նույնը։

Տագնապը սկզբից եւ ամբողջ տեւողության ընթացքում ժխտական անդրադարձ ունեցավ Դաշնակցության վարկի եւ հեղինակության վրա։ Դաշնակցության կազմակերպական խնդիրների հանրայնացումը այսքան

բացահայտ եւ պաշտոնական կերպով տեղի չէր ունեցել: Դեպքերի ընթացքը ցոյց տվեց, որ այս իրավիճակի պատասխանատուն Հ.Յ.Դ. Բյուրոն էր: Նա է Դաշնակցության արժեքների, ավանդների եւ հեղինակության գլխավոր պատասխանատուն եւ հենց ինքը նախանձախնդիր պետք է լիներ Դաշնակցության վարկով եւ հեղինակությամբ: Բյուրոն չգտնվեց բարոյական այն բարձրության վրա, որ նրանից պահանջում է ՀՅԴ Կանոնագիրը, Պատմութիւնը եւ Դաշնակցական Բարոյականությունը: Հավանաբար հետագային ավելի լայն ուսումնասիրությանբ գրվելիք պատմությունը պիտի արձանագրի, որ 33-րդ Ընդհանուր Ժողովի կողմից ընտրված Բյուրոյի սխալ քաղաքականության հետեւանքով է, որ Դաշնակցությունը այսքան վարկաբեկվեց:

Ա ՄԱՍ

ԻՆՉՊԵՍ ԾՆՎԵՑ ՏԱԳՆԱՊԸ

Հասկանալու համար թե ինչու Արեւմտյանը անտեսեց Բյուրոյի որոշումը եւ դիմեց Շրջանային Ժողով գումարելու եւ Կ.Կ. ընտրելու քայլին, պետք է ժամանակագրական կարգով գնալ տարիներ ետեւ եւ փորփրել Հ.Յ.Դ. Բյուրո-Արեւմտյան Ամերիկայի շրջանի հարաբերությունները, առնվազն վերջին տասը տարիներին։ Ծանոթանալով դեպքերի եւ իրադարձությունների հոլովույթին, հասկանում ենք, որ Արեւմտյան Ամերիկայի կառույցի կողմից 55-րդ Շրջանային Ժողովի գումարման եւ Կ.Կ. ընտրելու այդ որոշումը կապված չէր Բյուրոյի միմիայն Կ.Կ. նշանակելու քայլին։

2009 թվականը նշանակալից է բովանդակ հայության համար։ 2008-ի աշնանը, Հայաստանի իշխանությունները՝ հանձինս նախագահ Սերժ Սարգսյանի, ձեռնարկեցին Թուրքիայի հետ առանց նախապայմանների բանակցությունները, հայ-թուրքական հարցերի կարգավորման եւ սահմանների բացման համար։ Այս բանակցությունները պատմության մեջ մնացին «Ֆուտբոլային Դիվանագիտություն» անվամբ։ Նրա բացահայտ մեկնարկը սկսվեց Հայաստան-Թուրքիա ֆուտպոլի մրցումով, որին հրավիրուել էր Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը։ Նախագահ Սարգսյանը իր վարած այս քաղաքականության հաւեյալ հեղինակություն

եւ օրինականություն տալու համար ձեռնարկեց սփյուռքյան հայաշատ գաղութներ այցելության՝ նրանց զորակցությունը եւ համընդհանուր կարծիքը առնելու: Նա գիտակցում էր, որ Թուրքիայի հետ մերձեցման գծով սփյուռքահայությունը որպես ցեղասպանության ժառանգորդներ իր խոսքը ունի ասելիք, մանավանդ որ Թուրքիայի առաջադրած նախապայմաններից մեկը ցեղասպանության վավերականությունը քննելու հանձնաժողովի կազմությունն էր:

Դաշնակցությունը, որ մաս էր կազմում նախագահի կազմած առաջին կոալիցիոն կառավարության, դեմ չէր Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման: Դաշնակցության տեսակետը այն էր, որ այդ կարգավորումը պետք չէ լինի ի հեճուկս Հայկական ցեղասպանության եւ հայության իրավունքների անտեսման: Այս պատճառով էլ նա դուրս եկավ կառավարությունից եւ դարձավ ընդդիմադիր: Նախագահ Սերժ Սարգսյանի սփյուռքյան գաղութներ այցելության առիթով, Դաշնակցությունը կազմակերպեց «ՈՉ»-ի շարժումը: Բոլոր այն գաղութները, որտեղ Դաշնակցությունը տիրական ներկայություն էր, նախագահ Սարգսյանին դիմաւորեցին հազարներով, որոնք իրենց «ՈՉ»ը ասացին եւ այպանեցին Հայաստանի նախագահին զիջումներ կատարելու քաղաքականության համար: Հ.Յ.Դ. Բյուրոն այս շարժման կազմակերպումը եւ համադրումը վստահել էր Արեւմտյանից Բյուրոյի անդամ Վիգեն Հովսեփյանին:

Շարժումին հաջողվեց իր պատգամը փոխանցել Սերժ Սարգսյանին, որի համար ցանկալի չէր նման ընդունելություն. ավելին, հայահոծ քաղաքներում հայության ցույցերի մեծաթիվ մասնակցությունը, նախագահ Սարգսյանը համարեց իր անձին դեմ ուղղված վիրավորանք։ Դաշնակցությունը կառավարությունից դուրս գալով հանդերձ մնացել էր իշխանական կուսակցություն։ Սակայն «ՈՉ»-ի Շարժումը կարող էր խանգարել կուսակցության եւ Հայաստանի նախագահին հարաբերությունները։ Այդ շարժման մեծածավալ բնույթը խորապես բախվեց Հայաստանի իշխանություններին լծակից դարձած Դաշնակցության եւ կուսակցությունը որպես անկախ եւ ինքնուրույն քաղաքական ուժ տեսնելու ուղղությունների միջեւ։

Հակադրության պատրույգի առաջին բոցը տրվել էր։ Բայց ան մնաց Բյուրոյի կազմում։ Այս հակադրությունը եւ կազմակերպական խնդիրները իրանց դրսեւորումը գտան 2011-ին ՀՅԴ 31-րդ Ընդհանուր Ժողովին։ Սփյուռքյան որոշ շրջաններ՝ Լիբանան, Իրան եւ Արեւելյան Ամերիկա, Արեւմտյանի գլխաւորությամբ ունէին կուսակցությունը բարեկարգող առաջարկներ, որոնք կարելի է ամփոփել հետեւյալ կետերում։

Ա- Կառավարության մեջ գործող երեք նախարարներից (Աղվան Վարդանյան, Լեվոն Մկրտչյան, Դավիթ Լոքյան) ոչ մեկը ներառվի նորընտիր Բյուրոյի կազմում։

Բ – Բյուրոյի կազմում ներկայացված լինի նվազագույնը մեկ իգական ներկայացուցիչ։ Առաջադրվել էր Մարիա Թիթիզյանի անունը։

Գ – Բյուրոյի անդամ Մարիո Նալբանդյան, որն արդեն չորս շրջան է (16 տարի) Բյուրո է, փոխարինել Խաչիկ Տէր-Ղուկասյանով, պահած լինելով հարավային Ամերիկայի ներկայացուցչությունը։

Դ – Լիբանանի պատգամավորների միաձայն պահանջին համաձայն, Բյուրոյի կազմից դուրս պահել Մկրտիչ Մկրտիչյանը եւ զայն փոխարինել առաջարկվող 3-4 անուններից մեկով։

Այս կետերի շուրջ բանակցությունները վարեցին մի կողմից Հրանտ Մարգարյանը, մյուս կողմց Վիգեն Հովսեփյանը։ Հրանտ Մարգարյան անդրդվելի է մնում իր կազմելիք Բյուրոյի ցանկի վրա։ Բանակցությունները վիժեցին եւ Վիգեն Հովսեփյանը եւ իր գործակից պատգամավորները, որոնց մեջ կային Բյուրոյի հավանական թեկնածուներ, մերժեցին մաս կազմել ընտրվելիք Բյուրոյին։ Միակ բացառությունը եղաւ Հակոբ Տէր-Խաչատուրյան, որ բարեկարգչական առաջարկներին իր համաձայնությունը հայտնած լինելով հանդերձ, դավաճանեց իր համախոհ պատգամավորներին եւ ծածկաբար համաձայնություն կնքեց Հրանտ Մարգարյանի հետ՝ մաս կազմելով Բյուրոյին։ Այս դիրքորոշումով պետք է բացատրել Հակոբ Տեր Խաչատուրյանի հետագայի կազմակերպական բոլոր քայլերը, որոնք բխում էին իր եւ Հրանտ Մարգարյանի համագործակցությունից։

Կուսակցությունը բարեկարգելու առաջարկները, որոնք ներկայացվեցին 31-րդ Ընդհանուր Ժողովին, անունների տեսք ունենալով հանդերձ, գաղափարական հիմք ունէին եւ կմիտէին կուսակցությունը

դուրս բերել ղեկավարման լճացումից եւ ավելի ժողովրդավար հիմքերի վրա դնել: Փորձենք քննել ներկայացված առաջարկների էությունը:

Առաջին կետը հստակորեն խոսում է պետություն-կուսակցություն տարանջատման մասին: Կուսակցական նախարարներ եւ երեսփոխաններ մաս պետք չէ կազմեն պատասխանատու մարմիններին: Այս հասկացությունը Դաշնակցությունը ունեցել է առաջին հանրապետության ժամանակաշրջանին: Այդ օրերի Բյուրոյի անդամներ մաս չեն կազմել Հայաստանի խորհրդարանին կամ կառավարության: Հետագային, նույն այս հասկացությամբ էլ գործել է Դաշնակցությունը սփյուռքում եւ մանավանդ Միջին Արեւելքում՝ Լիբանանում, Սիրիայում եւ Պարսկաստանում, ուր երեսփոխաններ եւ կամ պետական նախարարներ Դաշնակցական մարմինների մաս չեն կազմել: 1990 թ-ին Հայաստան վերադառնալով, այս հասկացությունը վերացավ: Դաշնակցության գործելաոճի այս սկզբունքը բխում էր նրա ժողովրդավարության ընկալումից, որն է. հաշվետու կուսակցականները պետք չէ մաս կազմեն հաշվեառ մարմիններին: Դաշնակցության ըմբռնումով մեղադրյալն ու դատավորը նույն անձերը չեն կարող լինել: Հետեւաբար նույն անձը թե՛ կառավարության եւ թե՛ Բյուրոյին մաս կազմելով խախտում էր ժողովրդավարության տարրական սկզբունքներից մեկը: Առավել եւս, որպեսզի հաստատվի եւ պարզ դառնա կուսակցության ինքնուրույնությունը, որ արդեն իսկ սկսել էր աղավաղվել հանրության մոտ:

Առաջարկության երկրորդ կետը կանանց ներկայացուցչության մասին է։ Այս առաջարկի հիմնավորումը բխում է Դաշնակցության ծրագրային եւ ընկերվարության հավատամքից։ Հանուն հավասարության պայքարող Դաշնակցությունը պետք է օրինակ ծառայի բոլորին։ Կանանց ներառումը կուսակցության ղեկավար մարմնում, խթանում է նաեւ նրանց անդամակցությունը եւ գործոն մասնակցությունը կուսակցական աշխատանքներին եւ կարող էր նոր շունչ բերել կազմակերպության։ Առնվազն Արեւմտյանը այս իմաստով օրինակելի է եւ վերջին տարիներին Կ.Կ.-ի մաս են կազմել իգական սեռի ներկայացուցիչներ։

Առաջարկելով որ Մարիօ Նալբանդյան փոխարինվի Խաչիկ Տեր Ղուկասյանով, պատգամավորները հստակ կեցվածք են ցուցաբերել այն երեւույթի դեմ, որ մարմինների անդամակցությունը պետք է ինչ-որ ժամանակահատվածով սահմանափակել։ Դաշնակցության կանոնագիրը նման սահմանափակումի մասին չի խոսում։ Բայց թե՛ ժողովրդավարորեն եւ թե՛ մարդկայնորեն, չնորոգվող ղեկավարությունը ժամանակի ընթացքում կուսակցությունը տանում է լճացման։ Դաշնակցական մարմինների անդամակցությունը կարող է վերածվել մենաշնորհների եւ այդ ախտագին երեւույթից բխած բոլոր հոռի բարքերով եւ երեւույթներով։ Բյուրոյի կազմը նոր կադրերով համալրվելով, նոր որակ եւ նոր մոտեցումներ պիտի բերեր կազմակերպությանը եւ կուսակցությունը նորոգվող ոգիով պիտի շարունակեր իր քաղաքական գործունեությունը։ Այս համոզումով էլ, 2023 թ-ին, Արեւմտյանի 56-րդ Շրջանային Ժողովը իբրեւ նախաքայլ, կանոնագրի փոփոխություն կատարեց, որտեղ նշվում է

թե Դաշնակցական շարքայինը երկու անընդմեջ շրջան կարող է մարմնի անդամ ընտրվել: 31-րդ Ընդհանուր Ժողովի որոշ պատգամավորների մոտեցումն էլ նույնն էր եւ նպատակ ուներ կուսակցությունը բարեկարգել եւ երիտասարդացնել:

Հրանտ Մարգարյանի կողմից առաջադրված Մկրտիչ Մկրտիչյանի անունը եւս այդ պատգամավորական նույն խմբակի եւ մանավանդ Լիբանանի պատգամավորների կողմից ընդունելի չէր: Այստեղ եւս կանոնագրային որեւէ դրույթ չկայ, որտեղ ասվում է թե շրջանի պատգամավորները իրենք են որոշում իրենց շրջանի Բյուրոյի ընտրելի անդամի անունը: Առանց մտնելու կազմակերպչական «խոհանոց», անհրաժեշտ է ընդգծել, որ Բյուրոն որպես բարձրագույն մարմին, ավելի հեղինակավոր է դառնում երբ ունենում է ներկայացուցչական բնույթ: Մանաւանդ որ նշյալ թեկնածուն նախապես մի քանի անգամ մաս է կազմել Բյուրոյին եւ հետեւաբար կարելի էր զայն փոխարինել ավելի ընդունելի թեկնածուով: Մկրտիչ Մկրտիչյանը մինչեւ այսօր էլ շարունակում է մնալ Բյուրոյի անդամ, որը ըստ շատ կուսակցականների վկայության, նույնիսկ իր գործակիցներից ոմանց, ատելությամբ եւ քինախնդրությամբ լցված է գործում իր անվան շուրջ խնդիր առաջացրած կուսակցականների նկատմամբ:

Հրանտ Մարգարյանի կողմից այս առաջարկների մերժումը պատճառ չէր կարող լինել, որ Արեւմտյանի շրջանը հրաժարվի կուսակցությունը բարեկարգելու իր այս առաջարկներից: 2015 թ-ին (32-

րդ) եւ 2019 թ-ին (33-րդ) Ընդհհանուր Ժողովներին այս առաջարկները Արեւմտյանի պատգամավորների կողմից ներկայացվեցին որպես սկզբունքային կետեր Դաշնակցությունը ավելի ժողովրդավար դարձնելու:

Այսպես, 2011 թ-ին գումարված Դաշնակցության 31-րդ Ընդհանուր Ժողովը կարեւոր անկյունադարձ է դառնում Արեւմտյանի տագնապի համար: Թեպետ բանակցությունների ձախողումից հետո Արեւմտյանի պատգամավորները քվեարկում են Հրանտ Մարգարյանի Բյուրոյի ցանկին, բայց խզումը արդեն դարձել էր բացահայտ:

Վիգեն Հովսեփյանի Բյուրոյից հեռանալուց կարճ ժամանակ հետո, Արեւմտյանի Շրջանային Ժողովը նրան ընտրում է Կեդրոնական Կոմիտեի ներկայացուցիչ, այս ձեւով «վստահության քվե» տալով գաղափարական, քաղաքական եւ կազմակերպչական բարեկարգումների այն առաջարկներին, որոնք դրվել էին շրջանի պատգամավորների կողմից 31-րդ Ընդհանուր Ժողովին: 2014 թ-ի դեկտեմբերին մահանում է Վահան Հովհաննիսյանը, որով Բյուրոյի ներկայացուցիչը՝ Հրանտ Մարգարյանը, իր ամբողջական հակակշիռնէ հաստատում թե՛ Բյուրոյի եւ թե՛ առհասարակ կուսակցության վրա:

Հրանտ Մարգարյանի մենատիրական իշխանությունը կուսակցության վրա հաշտ աչքով չէր դիտվում: 2013 թ-ին, Լիբանանի եւ Արեւմտյանի Կ.Կ.-ները Ընդհանուր Ժողովին առաջարկ են ներկայացնում: Հավանական է, որ նրանց միջեւ համաձայնություն է եղել նախօրոք: Այս առաջարկի թիրախը Հրանտ Մարգարյանն էր եւ իր վարած ձախող եւ

կասկածելի քաղաքականությունը, մասնավորաբար Հայաստանում, ուր Դաշնակցությունը վերամիացել էր նախագահ Սերժ Սարգսյանի կոալիցիոն կառավարությանը։ Նոյն այդ օրերին, ամեն կողմից սկսվել էր ահազանգ հնչել Հայաստանի իշխանությունների կատարած թալանին եւ վարչակարգում տիրող փտածության մասին, որոնց հետեւանքով երկրից արտագաղթը շարունակվում էր մտահոգիչ թվերով։ Իսկ Արցախի հարցով Ադրբեջանի հետ բանակցությունները մշուշոտ էին եւ հոռետեսություն էր տիրում։

Արեւմտյանից եւ Լիբանանից եկած արտակարգ Ընդհանուր Ժողովի առաջարկը մի նոր վիհ է բացում Հրանտ Մարգարյանի Բյուրոյի եւ Արեւմտյանի միջեւ։ Այս երկու Կ.Կոմիտեությունները սփյուռքյան կառույցի ամենակարեւոր շրջաններից են, մեկը՝ Միջին Արեւելքի իսկ երկրորդը՝ արեւմտյան աշխարհի։ Բյուրոյի ներկայացուցիչը 2014 թ-ի սկզբին ուղեւորվում է Լիբանան, ներկա լինելու Շրջանային Ժողովին, որի ավարտին, առանց հիմնավոր բացատրության եւ ի հեճուկս ներկա պատգամավորների մեծամասնության կողմնորոշմանը, նշանակում է իրեն «հնազանդ» Կ.Կոմիտե։ Շրջանի ընտրական խաղաթղթերը ամբողջությամբ խառնվել էին։ Հաջորդ տարի, 32-րդ Ընդհանուր Ժողովին, Լիբանանի պատգամավորները, ինչպես եւ Արեւմտյանի, չեն քվեարկում Հրանտ Մարգարյանի ընտրության։ Այս Ընդհանուր Ժողովին նա միայն մի ձայնի առավելությամբ ընտրվում է Բյուրո։ Ընտրության այս պատկերը խիստ մտահոգիչ է դառնում նրա համար։ Դաշնակցության Բյուրոն իր

ձեռքում առած՝ նա սկսում է կուսակցությունը «կառուցել» իրա ճաշակին համաձայն:

2015 թ-ին, Լիբանանում տեղի ունենալիք Շրջանային Ժողովի առիթով նա դարձյալ մեկնում է Լիբանան եւ նոր Կ.Կ. ընտությունների գծով բացահայտ կերպով աշխատանք է տանում: Պատգամավորներին վրա գործադրվում են բարոյական ճնշումներ, կատարվում են խոստումներ եւ ի վերջո շատ չնչին տարբերությամբ նրան հաջողվում է իրեն «հնազանդ» Բյուրոյական Կ.Կ. առաջացնել, որ գոյատեւում է մինչեւ այսօր:

Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները անարձագանք չէին կարող մնալ սփյուռքի դաշնակցականների մոտ: Կուսակցությունը տուրք տալով իշխանություններին անտարբեր էր մնացել ժողովուրդի նույնիսկ ընկերային պահանջների բողոքի ելույթներին: 2013 թ-ին Երեւանի տրանսպորտի թանկացման բողոքի ցույցերին եւ 2015 թ-ին էլեկտրականության թանկացման դեմ եղած ժողովրդային հավաքներին, Դաշնակցությունը ոչ միայն չմասնակցեց, այլեւ քննադատեց այդ բողոքները, հակառակ որ նրանք որեւէ քաղաքական ուժի առաջնորդությամբ չկատարվեցին: Իսկ 2016 թ-ի Ապրիլյան քառօրյա պատերազմից եւ Սասնա Ծռերի գործողությունից հետո դժգոհության ալիքը սկսվում է մեծանալ կուսակցության վարած քաղաքականության հանդեպ: Բյուրոն իր իշխանությունը անսասան պահելու համար դիմում է սեղմումների եւ կարգապահական քայլերի: Դաշնակցական մամուլում

արգելվում է այլակարծությունը: Դաշնակցության քաղաքական վարքագիծը չբաժանող կամ անուղղակիորեն քննադատող հոդվածագիր կուսակցականները կա՛մ մեկուսացվում են կա՛մ հեռացվում: Այս ժամանակաշրջանին հեռացվեցին «Դրօշակ»-ի երկար տարիների խմբագիր Նազարեթ Բերբերյանը, Բյուրոյի նախկին անդամ եւ «Ասպարեզ» օրաթերթի խմբագիր Աբո Պողիկյանը, Հայ Դատի մարտիկ Անդրանիկ Պողոսյանը եւայլն: Նվազ «վտանգավոր» շարքայիններ պարզապես կուսակցականորեն պատժվեցին: Նույնիսկ ընկերային ցանցերի վրա գրառումների համար ընկերներ պատժվեցին կամ հեռացվեցին: Մինչեւ 2018 թվականի սկիզբը Բյուրոյին հաջողվել էր լռեցնել իրենց քննադատողներին եւ իր իշխանության սպառնալիք հանդիսացողներից շատերին: Մնում էր գլխավոր ամրոցը՝ Արեւմտյանը:

Բյուրոն ավելի զգուշավոր էր Արեւմտյանի նկատմամբ եւ կտրուկ քայլերի չդիմեց այնտեղ, հակառակ այն փաստին, որ թւում էր թե շրջանը իր վերահսկողությունից դուրս է եւ իր ունեցած կարելիություններով կարող է կազմակերպական վտանգ հանդիսանալ իրեն համար: Արեւմտյանը թվաքանակով սփյուռքի ամենից մեծ եւ կազմակերպված գաղութն է, միաժամանակ նյութական ամենամեծ կարելիություններ ունեցողն է: Առավել, բոլոր երեւույթները ցոյց են տալիս, որ գաղութը պիտի շարունակի քանակական աճ արձանագրել, նկատի ունենալով Միջին Արեւելքի քաղաքական եւ տնտեսական անկայուն իրավիճակը եւ դրա հետեւանքով գաղթը դեպի արեւմուտք, ինչպես նաեւ Հայաստանի եւ առհասարակ հետխորհրդային երկիրների պարզած ոչ-նախանձելի

վիճակը եւ այդ երկրներից գաղթը դեպի ԱՄՆ։ Այս հանգամանքները նկատի առնելով, կարելի է ասել թե Արեւմտյան Ամերիկայի շրջանը ի վիճակի է Դաշնակցության կառույցում առաջնորդողի դիրք գրաւել եւ հետագայում առանցքը դառնալ կուսակցության քաղաքական-գաղափարական ուղղության եւ գործունեության։ Չափազանցություն արած չենք լինի եթե ասենք, որ Արեւմտյանի շրջանը այսօր սփյուռքի սիրտն է։ Գաղութի համայնքային կյանքի մեջ Կ.Կ.-ն ունի առանցքային դերակատարություն։ Կ.Կ.-ի կազմակերպած Դաշնակցության տոնակատարությանը ներկա են լինում 3000 հայորդիներ։ 2015 թ-ին Հայկական Ցեղասպանության 100 ամյակի քայլարշավը, որի կազմակերպման աշխատանքում հիմնական դերակատարում էր ունեցել Արեւմտյանի Կ.Կ.-ն, մասնակցել են 160.000 հայորդիներ։ Այս թվերը խոսում են այն մասին, որ Դաշնակցությունը հեղինակություն է Արեւմտյանում եւ Կ.Կ.-ն առանցքային դերակատար է դարձել գաղութում։

Արեւմտյան Ամերիկայի շրջանի կուսակցականների հետ մեր զրույցները եւ Կ.Կ.-ի շրջաբերականները ուղղված իր անդամներին, հաստատում են, որ Հ.Յ.Դ. Բյուրոյի կողմից շրջանը թիրախավորելու քաղաքականությունը սկսվում է 2015 թ-ին գումարված 32-րդ Ընդհանուր Ժողովից սկսյալ։ Այսինքն՝այն օրից, երբ Արեւմտյանի պատգամավորները մերժեցին քվեարկել հոգուտ Հրանտ Մարգարյանի։ Նախապես Լիբանան Կ.Կ. նշանակելով, նա «հպատակեցրել» էր շրջանը։ Նույնը հնարավոր չէր կատարել Արեւմտյանի պարագային։ Շրջանի կազմակերպական ներքին իրավիճակը չէր նմանվում լիբանանյան կառույցին։ Լիբանանի շրջանը

ավելի ավանդապահ է եւ կազմակերպական առումով՝ ավելի փխրուն։ Այնտեղ կային տարբեր հոսանքներ եւ խմբավորումներ։ Այդ հակադիր հոսանքները Հրանտ Մարգարյանը օգտագործեց 2014 թ-ին եւ 2015 թ-ին Լիբանան իր «առաքելությունը» հաջողացնելու համար։ Արեւմտյանը ավելի համախումբ էր եւ ներքին ճեղքեր գրեթե չկային, որոնց կարող էր ապավինել Բյուրոն։ Կային որոշ թվով կուսակցականներ, որոնք ընդդիմադիր էին, բայց կազմակերպական ուժ չէին ներկայացնում։ Կար նաեւ երկրի (Միացյալ Նահանգների) ներքին օրենքների արգելքը։ Այս հանգամանքները հաշվի առնելով, Բյուրոն սկսում է շրջանը իր աքցանում առնելու մեղմ քաղաքականություն վարել։ Առաջին հերթին, նա սկսում է իր շուրջը հավաքել եւ միավորել շրջանի «դժգոհ» կամ «ընդդիմադիր» կուսակցականները, որոնցից շատերը սկսում են անտեղի կերպով արժեւորվել։ Նրանց ԵՍ-ը քաջալերելու համար հրավիրվում են խորհրդաժողովների եւ նույնիսկ Ընդհանուր Ժողովների։ Այս քայլերին զուգահեռ, շրջանի վաստակավոր կուսակցականների հանդեպ սկսվում է ժխտական վերաբերմունք։ Գոյություն ունեցող տարակարծության էությունը աղավաղելու համար աշխատանք է տարվում հարցը անձնականացնելու։ Բյուրոյի՝ իմա Հրանդ Մարգարյանի հարվածի առաջին ծանրությունը ուղղվում է Վիգեն Հովսեփյանի դեմ։ Շրջանի ամենահեղինակավոր եւ հանրածանոթ դեմքը լինելով, նա դառնում է գլխավոր թիրախը։ Բազմաթիվ պիտակավորումներ են սկսվում տրվել նրա, կուսակցականորեն խռովարար անվանումից մինչեւ օտարերկրյա ցանցերի ծառայող։ Բյուրոն համոզվել էր, որ Հովսեփյանի չեզոքացումով

ավելի պիտի դյուրանա շրջանը վերահսկելու գործընթացը: Կազմակերպական խնդիրների հրապարակայնացումը սկսվում է այս հանգրվանին Հրանտ Մարգարյանի Բյուրոյի հովանավորությամբ: Նույն այս ժամանակաշրջանում, անբացատրելիորեն Հայաստանյան իշխանամետ թերթերում լուրեր եւ հոդվածներ են տպագրվում Արեւմտյանի մասին, որոնք միտված էին Արեւմտյանի շրջանը եւ որոշ անհատականություններ վարկաբեկելու: Դաշնակցության գործակից նախագահ Սերժ Սարգսյանի հովանավորությունը վայելող մամուլը սկսում է գրել Հրանտ-Վիգեն հակադրությունների մասին եւ վերջինիս մասին բազմաթիվ պիտակավորումները գալիս են մամլո այդ հրապարակումներից: Վարպետորեն սերտված եւ մշակված այս քայլերը նպատակադրել էին շրջանի կուսակցականների մոտ ենթահող պատրաստել առաջիկայի կազմակերպական նոր իրավիճակներ ստեղծելու: Հակառակ Բյուրոյի կողմից վարվող հալածական այս քաղաքականության, շրջանի Կ.Կոմիտեները եւ կուսակցականները շարունակում են իրենց բնականոն գործունեությունը: Նրանք իրենց ժողովների ընթացքում կառույցային տրամաբանության շրջանակներում արձանագրում են իրենց բողոքները եւ քննադատությունները Բյուրոյի քաղաքական եւ կազմակերպական որոշումների դեմ, միշտ մնալով կազմակերպական կարգապահության հասկացության մեջ:

2018թ-ի Փետրվարի 23-ին Արեւմտյանի Լեռնավայր կոմիտեությունը կազմակերպում է «Ժողովրդային Ըմբոստություններ» նյութով Կլոր Սեղան, զեկուցավարներ ունենալով դոկտ. Ստեփան Աստուրյան, դոկտ.

Ռազմիկ Շիրինյան, դոկտ. Արա Խանճյան եւ համադրող դոկտ. Կարո Մոմճյան: Այս զրույցի ընթացքում հնչեցված հիմնական միտքը եւ եզրակացությունը լինում է այն, որ Հայաստանում հասունացել է ժողովրդային ըմբոստության նախապայմաններն ու մթնոլորտը: Այս Կլոր Սեղանը իրականության մեջ արտահայտիչն էր Արեւմտյանի Դաշնակցության այն տեսակետին, որ Հայաստանում Դաշնակցությունը վերջ տա պալատական խաղերին, վերադառնա իր ակունքներին եւ ինք նախաձեռնի իշխանափոխության:

Բ ՄԱՍ

ԻՆՉՊԵՍ ԶԱՐԳԱՑԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Կազմակերպականորեն այս իրավիճակն էր պարզում Դաշնակցությունը, երբ 2018ին գարնան Հայաստանում կատարվեց ժողովրդական թավշյա հեղափոխությունը։ Իշխող քաղաքական ուժը՝ Հանրապետական կուսակցությունը եւ նրա առաջնորդ Սերժ Սարգսյանը, ժողովրդական ճնշման տակ իշխանությունը հանձնում է Նիկոլ Փաշինյանին։ Դաշնակցությունը դաշնակից լինելով Սերժ Սարգսյանին, կորցնում է իշխանական լծակները եւ առաջին հանգրվանին մաս կազմելով հանդերձ նոր վարչապետ՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորած առաջին կառավարությանը, դառնում է ընդդիմադիր։ Դաշնակցություն-Փաշինյան գործակցությունը երկար չի տեւում։ Հոկտեմբերին՝ խորհրդարանի նիստի ավարտին, վարչապետը Դաշնակցական նախարարներին պաշտոնանկ է անում։ Մինչ այդ, Սեպտեմբերի 23-ին, Երեւանի ավագանիի ընտրություններին Դաշնակցութանը չի հաջողվում անցնել հինգ տոկոսի շեմը։ Նա հաւաքում է միայն 5882 ձայն (քվեարկողների 1.62 տոկոսը) եւ մաս չի կազմում մայրաքաղաքի ավագանիին։ Երեք ամիս ետք. 2018-ի Դեկտեմբերին տեղի է ունենում Հայաստանի ազգային ժողովի արտահերթ ընտրությունները։ Նախկին դաշնակից Հանրապետական կուսակցության աջակցությունից եւ

իշխանության լծակներից զրկված Դաշնակցությունը ամոթալի պարտություն կրում է (կուսակցությունը հավաքեց 3.88 տոկոս ձայն կամ 48816 քվե)։ 1999 թ-ի խորհրդարանական ընտրություններից հետո առաջին անգամն էր, որ Դաշնակցությունը կորցնում էր խորհրդարանում պատգամավորական իր ներկայացուցչությունը։ Այս բոլոր թվերը ցույց են տալիս, որ Դաշնակցության վարկանիշը մեծ չափերով անկում է ապրել հաչս Հայաստանի ժողովուրդին։

Իսկ ինչ էր կատարվում Արեւմտյան ափերում։ Ժողովրդական հեղափոխությունը, որ սկսվեց ապրիլին, բազմաթիվ երկրների դաշնակցականների մոտ նոր զարթոնքի ազդանշանը հայտարարեց։ Արեւմտյանի դաշնակցականներն էլ իրենց հերթին նախանձախնդիր լինելով ժողովրդի հետ եւ ժողովրդի համար Դաշնակցության սկզբունքին, ժողովրդական այս ըմբոստության հանդեպ անտարբեր չմնաց։ Ինչպես Հայաստանի եւ հայության մեծամասնությունը, Արեւմտյանի դաշնակցականներն էլ առնվազն առաջին հանգրվանին, ժողովրդական շարժման մեջ տեսան հույսի նշույլ, ձերբազատելու Հայաստանում փտածության ու թալանի մեջ թաթախված իշխանություններից եւ ավելի արդար ու զարգացող պետություն հիմնելու կարելիություն եւ երկրում արմատական փոփոխությունների դրական հանգրվանի սկիզբ։ Իսկ մի քանի ամիս անց, 2018-ին օգոստոսի 21-ին, Նիկոլ Փաշինյանի իշխանության առաջին հարյուր օրերին ի նպաստ կազմակերպված մի հավաքի ընթացքում, Արեւմտյանի Կ.Կ.-ի անունով Կարմեն Օհանյանը հայտարարում է. «Հեղափոխությունը պե՛տք է հաջողի, եւ այս դժվարին

պարտականությունը միայն Հայաստանի կառավարության ուսերին պետք չէ բարդված լինի, այլ՝ ամեն մի հայի ու հայկական կազմակերպության համագործակցությամբ, ընդհանուր կարելիությունների օգտագործմամբ եւ մեր հավաքական ուժերի ընդհանուր զորաշարժով է դա հնարավոր։ Հեղափոխության հաջողման գործում՝ Սփյուռքում դերակատար ենք մենք բոլորս։ Համագործակցաբար, մենք մեր բոլոր լծակները գործի մղելով՝ պիտի դառնանք այն հզոր բազուկը, որ զորացնում է մեր հայրենիքը»։

Հայաստանի նոր իշխանությունների հանդեպ Արեւմտյանի քաղաքական դրական դիրքորոշումը այդքան էլ հաճելի չէր ՀՅԴ Բյուրոյին։ Թեպետ Դաշնակցությունը սկզբնական օրերին մաս էր կազմում Փաշինյանի կառավարությանը, բայց նրա դեմ ամենաբիրտ կերպով քարոզչական պայքար էր տարվում, մասնավորաբար սոցիալական ցանցերի վրա, վարչապետին մեղադրելով հակադաշնակցականության մեջ։ Այս հանգամանքը Բյուրոն սկսեց օգտագործել Արեւմտյանի դեմ, երբեմն թաքուն, երբեմն բացահայտ կերպով. նրան համարելով Փաշինյանի կողմնակից։ Նույնիսկ հեղափոխությունից առաջ կատարված Կլոր Սեղանի հանդիպումը շահագործվում է, որպես ժողովրդական հեղափոխության նախապատրաստական ենթահող կամ քարոզչություն, հակառակ այն իրողության, որ Բյուրո-Արեւմտյան հակադրությունը սկսել էր շուրջ տասը տարի առաջ եւ ոչ մի առնչություն չուներ հայաստանյան ներքին խմորումների հետ։

Հայաստանում պատահած քաղաքական գործընթացները եւ նրա հետեւանքով կուսակցության վարկանիշի անկումը մի կողից, մյուս կողմից Լիբանանի 2018 թ-ի մայիսին տեղի ունեցած երեսփոխանական ընտրությունները, որի ընթացքին հայ քվեարկողների միայն 55 տոկոսը իր ձայնը տվեց Դաշնակցությանը, քաղաքական պարտություններ էին եւ ժողովրդային մակարդակի վրա հեղինակազրկում: Մյուս կողմից, Հրանտ Մարգարյանի Բյուրոն կուսակցության ներսում ստեղծել էր մենատիրություն, որի վերահսկողությունից դուրս էր մնում միմիայն Արեւմտյանը: Այս պայմաններում, Բյուրոյի ներկայացուցիչը Ընդհանուր Ժողովի նախօրեին ուներ ժողովականների քվեների մեծամասնությունը եւ Դաշնակցությունը գումարեց իր 33-րդ Ընդհանուր Ժողովը 18-24 2019 թ-ի հունվարին Ստեփանակերտում:

Հ.Յ.Դ. 33-րդ Ընդհանուր Ժողովը մի նոր անկյունադարձ է լինում Բյուրո-Արեւմտյան Ամերիկա հարաբերություններում: Առաջին հերթին, Բյուրոն Ընդհանուր Ժողովին հրավիրել էր Արեւմտյանի շրջանից Ստեփան Բոյաջյանին եւ Վաչե Թովմասյանին, որոնք կազմակերպականորեն շրջանում ներկայացնում էին ընդդիմադիր փոքրամասնությունը: Նույն այդ հրավիրյալների կողմից շրջանի մասին ներկայացված զեկուցումը, Դաշնակցության կազմակերպական կանոններին հակասող ընթացքով, որպես հիմք ընդունվում է ժողովականների կողմից, ըստ որի Արեւմտյանի շրջանում «կազմակերպական խնդիրներ» կան: Մինչդեռ Արեւմտյանի Շրջանային Ժողովի բանաձեւը անտեսվում է: Այս երեւույթը խոսում է այն մասին, որ

նախքան Ընդհանուր Ժողովը, արդեն իսկ Արեւմտյանի համար նախատեսված ծրագիր եղել է։ Ժողովի ընթացքում շրջանը ներկայացնող երեք պատգամավորների դեմ շինծու եւ անհեթեթ հիմնավորումներով դատեր բացվեցին։ Այս դատերի բնույթը եւ նրանց ավարտը դուրս է Դաշնակցական բարոյական ամեն հասկացությունից։ Այս քայլով, Բյուրոյի այդ օրերի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը փորձում էր նվաստացնել Արեւմտյանի պատգամավորներին եւ նրանց կարգապահական տնօրինումի ենթարկելով վերահսկողության տակ առնել շրջանը։ Բացված դատերի բնույթը այնքան անհիմն էին, որ հնարավոր չի լինում կարգապահական տնօրինումներ սահմանել։ Սակայն Հրանտ Մարգարյանը որոշել է Արեւմտյանի ընկերներին ամեն գնով ստորացնել եւ վրեժխնդիր լինել։ Դաշնակցականորեն չլսված եւ չտեսնված մեղայագիրներ ստորագրել կտան Վիգեն Հովսեփյանին։ Նա այդ մեղայագիրը ստորագրում է համոզված լինելով, որ Արեւմտյանի հարցը պիտի փակվի, ներկուսակցական մթնոլորտը պիտի բյուրեղանա եւ Բյուրո-Արեւմտյան կապերում նոր էջ պիտի բացվի։ Այս բոլորը բավարար չէին շրջանին տիրություն անելու համար։ Դատական հանձնախումբը, գոհացնելու համար մարգարյանական քաղաքականությունը, անհասկնալիորեն Ժողովի ավարտին, Բյուրոյի ընտրության օրակարգից անմիջապես առաջ, ներկայացնում է մի բանաձեւ, որ վավերացվում է ժողովականների կողմից։ Այդ բանաձեւը պարտականություն էր տալիս նորընտիր Բյուրոյին մոտիկից հետեւել Արեւմտյանի կազմակերպական կյանքին եւ այդ գծով քայլեր ձեռնարկել։ Նշյալ բանաձեւը թեւեր տվեց

նորընտիր Բյուրոյին եւ հանգեց 2020 թ-ին դեկտեմբերի 27-ին Կ.Կ. նշանակելու նրա որոշումին: Ընդհանուր Ժողովի այս բանաձեւով Հրանտ Մարգարյանը, որ ժողովի նախօրեում հայտարարել էր թե նոր Բյուրոյի մաս պիտի չկազմի, այրող շազանակները փորձում էր դուրս հանել նոր ներկայացուցչի՝ Հակոբ Տեր Խաչատուրյանի ձեռքով:

Բայց արդյո՞ք Արեւմտյանում կային կազմակերպական հարցեր եւ ապառողջ մթնոլորտ, ինչպես 33-րդ Ընդհանուր Ժողովը լսելով Վաչե Թովմասյանի եւ Ստեփան Բոյաջյանի զեկուցումները, տրամադրվեց եւ Բյուրոյին հատուկ հանձնարարական տվեց շրջանի հարցերին մոտիկից հետեւել եւ քայլեր ձեռնարկել: Հետադարձ ակնարկ նետելով Արեւմտյանի կազմակերպական կյանքի վրա, նկատում ենք, որ Արեւմտյանի հանդեպ կատարվող մեղադրանքը՝ թե կազմակերպականորեն շրջանը ապառողջ վիճակում է, արդար չէ եւ շինծու է: Համենայնդեպս, եթե նույնիսկ կային չբավարարված ԵՍ-եր եւ անձնական նկրտումներ, շրջանը բյուրոյական կոշտ միջամտության ենթահող չէր պարզում: Կազմակերպական ժխտական բազմաթիվ երեւույթներ, որոնք առկա էին կուսակցության այլ շրջանների կառույցներում (որոնք մինչ այսօր առկա են), Արեւմտյանում կամ նվազագույն չափով էին կամ առհասարակ չկային: Այսպես՝ վերջին 20 տարիներին 49 կուսակցականներ մաս են կազմում ընտրված Կենտրոնական Կոմիտեներին: Սա նշանակում է, որ մենաշնորհային եւ մենատիրական երեւույթը, որ նաեւ խորթ է Դաշնակցության համար, առհասարակ գոյություն չուներ: Իսկ այս երեւույթը բացորոշ կերպով մեր առաջ ուրվագծվում է հայաստանյան կառույցի պարագային, ուր վերջին

25 տարիներին նույն դեմքերը երեւում են հրապարակի վրա։ Վերջին տասը տարիներին շրջանից հեռացվել են 15 կուսակցականներ, որոնցից 5-ը հետագայում վերընդունվել են։ Հեռացվողներից երեքը բարոյական հանցանքի համար հեռացվել են։ Իսկ 15-ից տասը հեռացվել են կոմիտեների առաջարկով։ Այս թվերը եթե համեմատենք այլ շրջանների կարգապահական տնօրինումների հետ, պիտի հասկանանք, որ Արեւմտյանի շրջանում Կ.Կ-ները ունեցել են կուսակցական հանդուրժողականություն եւ ընկերական համերաշխությունը եղել է տիրապետող, ինչ որ կազմակերպական-ընկերական կյանքի վրա ազդած է դրականորեն։ Սակայն, այս բոլոր խնդիրները խորքային քննարկման չեն ենթարկվում Ընդհանուր Ժողովի կողմից, այլ ամբողջ ուշադրությունը կենտրոնացվում է Արեւմտյանի վրա, այն Բյուրոյին ենթարկելու հստակ մտադրությամբ։ Այս տրամադրություններով եւ տխրահռչակ բանաձեւով Ընդհանուր Ժողովը ցրվում է, սպասելով նոր Բյուրոյի առնելիք քայլերին։

2019 թ-ի սեպտեմբերին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը այցելում է Լոս Անջելոս։ Բյուրոյի կողմից թելադրանք է ուղղվում Կ.Կ.-ին հավուր պատշաճի ընդունել վարչապետին եւ մեծաթիվ ներկայություն ապահովել նրա համար կազմակերպված ժողովրդային հավաքին։ Այս այցելությունը պատահում էր այն ժամանակ, երբ Դաշնակցությունը Հայաստանում դարձել էր «արմատական» ընդդիմություն, իսկ Դաշնակցական մամուլը եւ սոցիալական ցանցերի վրա դաշնակցականներ քննադատում էին վարչապետը որպես հակադաշնակցական։ Բյուրոյի այդ թելադրանքին հակասում է

դաշնակցական մամուլի տեղեկատվությունը։ Yerkir.am-ում լույս տեսած մի գրություն զուգահեռներ է անցկացնում եւ փաստերը աղավաղում Լոս Անջելեսում վարչապետի համար կազմակերպված ժողովրական հավաքի եւ Իշխան Սաղաթելյանի Բեյրութ այցելության առիթով կազմակերպված ժողովրդական հավաքի միջեւ։ «Սեպտեմբերի 22-ին Լոս Անջելեսում հանրահավաքի կազմակերպման համար ՀՀ իշխանությունները «ներդրել են բոլոր ռեսուրսները», այնինչ Բեյրութում կայացած հավաքը «նախաձեռնել էր ՀՅԴ Լիբանանի Հանրային կապերի մարմինը։ Բեյրութում ՀՅԴ-ի կողմից կազմակերպված միջոցառմանը մասնակցել է 8,000 լիբանանահայ այն դեպքում, երբ Բեյրութի հայ համայնքի թիվը 30,000 է (սխալ թիվ է՝ հեղ.)։ Այսինքն, փառատոնին մասնակցել է Բեյրութի հայ բնակչության 27%-ը։ Կալիֆորնիայում բնակվում է 1,000,000 հայ, իսկ Փաշինյանի հրավիրած հավաքին մասնակցել է ընդամենը 10,000 ամերիկահայ՝ 1%-ը։ Պատմության համար պետք է արձանագրել. Բյուրոյի թելադրանքով Լոս Անջելեսի հավաքին մասնակցել են կուսակցականներ, Բյուրոյի եւ Կ.Կ.-ի անդամներ եւ այլն։ Փաստերի այս խեղաթյուրումը Արեւմտյանի Կ.Կ.-ի աշխատանքն ու հեղինակությունը նսեմացնելու հերթական քարոզչական աշխատանքն էր, որ տարվում էր Բյուրոյի հայաստանյան մամուլով։

2019 թ-ի 33-րդ Ընդհանուր Ժողովի կողմից ընտրված Բյուրոն, Ընդհանուր ժողովի բանաձեւով «զինված», ձեռնամուխ է դառնում Արեւմտյանի հարցերի «կարգավորմանը»։ Մարտի 2020-ին, Բյուրոն Արեւմտյանի 54-րդ Շրջանային Ժողովի կողմից ընտրված Կ.Կ-ի կազմի

վրա նշանակում է չորս նորեկ անդամներ։ Բյուրոյի կողմից այս քայլը եւս աննախընթաց էր եւ կանոնագրային հիմք եւ բացատրություն չուներ։ Այս որոշման նպատակը շրջանում բյուրոյական ազդեցությունը հզորացնելն ու հող պատրաստելն էր հաջորդ Շրջանային Ժողովի բյուրոյական Կ.Կ-ի ընտրության հաջողության համար։ ՀՅԴ կանոնագրի համաձայն, շրջանի Կ.Կ.-ի անդամների թիվը ճշտում է Շրջանային Ժողովը, իսկ ընտրված մարմինը իր գործունեության ընթացքում հավելյալ անդամների կարիք ունենալու դեպքում դիմում է Բյուրոյին եւ անուններ առաջարկում։ Բյուրոն արդեն խախտել էր Դաշնակցության կանոնագիրը տակավին 2020 թ-ի մարտ ամսին։ Արեւմտյանի Կ.Կ.-ն միաձայնությամբ բողոքում է այս որոշման դեմ, սակայն անօգուտ։ Միաժամանակ Բյուրոն ձեռնարկում է շրջանի կուսակցականների բնակության վայրերի հասցեների (ZIP CODE) ճշտման աշխատանք։ Այս աշխատանքը լարված մթնոլորտ է ստեղծում շրջանում։ Կուսակցականները սկսում են իրար լրտեսել եւ տեղեկություններ փոխանցել Բյուրոյին։ Հակառակ այս ոչ-դաշնակցականավայել մթնոլորտի առաջացմանը, Արեւմտյանի Կ.Կ.-ն ամբողջականորեն գործակցում է Բյուրոյի հետ, աշխատանքը իրագործելու եւ ավարտելու։ Բյուրոյի կողմից նման աշխատանքի ձեռնարկելը նաեւ հեղինազրկում եւ նվաստացնում էր Կ.Կ-ին եւ կանոնագրային իմաստով հակադրվում էր ապակենտրոնացյալ դրության հասկացության։ Այս քայլով Բյուրոն փորձում էր շրջանների կոմիտեություններում իր ազդեցությունը հզորացնել։ Բյուրոն երկրորդ անգամ խախտում էր Դաշնակցության կանոնագիրը եւ պարզ էր, որ

կուսակցական պայքար էր տանում իրեն ենթակա պատգամավորների ընտրության ենթահող պատրաստելու համար։

Այսպիսի լարված պայմաններում եւ մթնոլորտում էր որ Արեւմտյանի 55-րդ Շրջանային ժողովը պետք է գումարվեր 2020 թ-ի, 30 ապրիլի 30-ից մայիսի 3-ը ընկած ժամանակահատվածում։ Այդ օրերին, ինչպես բոլոր երկրներում, ԱՄՆ-ում եւս տարածվել էր Քովիդ համավարակը եւ պետության կողմից արգելվել էր հավաքներ կազմակերպել։ Այս իրողությունից ելնելով, Կ.Կ.ն Բյուրոյի գիտությամբ եւ հավանությամբ, ստիպում է հետաձգել ժողովը, մինչեւ որ կարելի լիներ պետական պատկան մարմիններից ստանալ համապատասխան ցուցմունքներ եւ թույլտվություն, համաճարակի օրերին ժողով գումարելու համար։

2020-թի օգոստոսին, Բյուրոյի հետ համախորհուրդ, Կ.Կ.-ն որոշում է Շրջանային Ժողովը գումարել 2020 թ-ի դեկտեմբերի 3-6-ը ։ Այս որոշմանը Բյուրոն համամտություն հայտնելով հանդերձ, ազդարարում է, որ Շրջանային Ժողովը չգումարելու պարագային, ստիպված պիտի լինի «քայլերի դիմել»։ Այս ազդարարությունը մինչ այժմ մնում է անհասկնալի։ Ի՞նչ քայլեր էր ակնարկում Բյուրոն Շրջանային Ժողովից ամիսներ առաջ։

2020 թ-ի սեպտեմբերի 27-ին սկսվում է Արցախի 44-օրյա պատերազմը։ Արեւմտյանի շրջանը զորաշարժի է ենթարկում գաղութը, քաղաքական, տնտեսական եւ քարոզչական օժանդակություն հասցնելու հայրենիք։ 425,000 ամերիկյան դոլար տրամադրվում է պատերազմի

կարիքների համար։ Հոկտեմբեր 11-ին, Արցախի պատերազմին զորակցության համար Լոս Անջելեսում կազմակերպվում է Հաղթանակի Երթ, որին իր գործոն մասնակցությունն է բերում Կ.Կ.-ն եւ որին մասնակցում է շուրջ 100,000 հայորդիներ։ Իսկ Տակավին մի տարի առաջ, 2019 թ-ին Լիբանանում ծայր առած տնտեսական պայմանների վատթարացման պատճառով, Արեւմտյանը Լիբանան էր ուղարկել է 165 000 ամերիկյան դոլարի օժանդակություն, ապա Բյուրոյի հորդորով եւ ընդառաջելով Արամ Ա Վեհափառի դիմումին, PAC-ի անունով կազմակերպել էր միջ-համայնքային հանգանակություն, որի հասույթը՝ մի միլիոն երեք հարյուր հազար ամերիկյան դոլար, նույնպես ուղարկովել էր Լիբանան, գաղութի եւ այնտեղ գործող կառույցներին օժանդակելու համար։ Կազմակերպականորեն, հոկտեմբեր ամսին կոմիտեությունները արդեն իսկ որոշել էին իրենց ընկերական ընդհանուր ժողովների թվականները՝ հարմարացնելով «Քովիտ»ի պատճառով պետական մարմինների առողջապահական ցուցմունքներին։ Անակնկալորեն Բյուրոն հրահանգում է դադարեցնել ժողովների գումարումը ցնոր տնօրինություն, հիմնավորելով՝ «Արցախյան պատերազմը եւ ԵԱՀԿի Մինսկի խմբի համանախագահների ժողովը Ժնեւում»։ Արցախյան 44-օրյա պատերազմը կարելի է հասկանալ ժողովների հետաձգման իբրեւ պատճառ կամ պատրվակ, թեպետ ոչ-արդարացուցիչ։ Սակայն, Մինսկի համանախագահության ժողովի գումարման կապը Շրջանային Ժողովի հետ, ուղղակի ծիծաղելի է դարձնում Բյուրոյի այս որոշումը։ ԿԿ-ի հարցումին՝ թե նմանօրինակ ժողովները ի՞նչ կապ կարող են ունենալ

Արեւմտյանի Շրջանային Ժողովի գումարման կամ առհասարակ Դաշնակցության ներկազմակերպական կյանքի հետ, մնում է անպատասխան։

Արցախյան 44-օրյա պատերազմը ավարտվեց նոյեմբեր 9-ի տխրահռչակ հայտարարությամբ եւ հայկական կողմի ամբողջական պարտությամբ։ Պատերազմը եւ նրա ավարտը խոր հիասթափություն պատճառեցին համայն հայության։ Հինգշաբթի, նոյեմբերի 12-ին, Արեւմտյանի Կ.Կ.-ից կազմված մի պատվիրակություն հանդիպում ունենում է Լոս Անջելեսում Հայաստանի ընդհանուր հյուպատոս, դեսպան Արմեն Բայբուրդյանի հետ եւ պահանջում է վարչապետի հրաժարականը։ «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ստորագրած համաձայնագիրը, որ վերջ դրեց Արցախի եւ Հայաստանի դեմ անողոք պատերազմին, պարտվողական էր եւ նվաստացուցիչ, եւ որ հաստատորեն մերժվում է ժողովուրդի կողմից։ Այսպիսի մի փաստաթուղթ մեծագույն դավաճանություն է մեր ազգի նկատմամբ», ասվում է Կ.Կ.-ի հայտարարությունում։

Իսկ Դեկտեմբեր 3-ին նախատեսված Շրջանային Ժողովի գումարման պատրաստության համար մնացել էր շատ քիչ ժամանակ։ Հակառակ այս սեղմ ժամկետին եւ երկրում Քովիտի հետեւանքով առաջացած դժվարություններին, Կ.Կ.-ն թելադրում է կոմիտեներին մինչեւ դեկտեմբերի 1-ը գումարել շրջանների ընկերական ընդհանուր ժողովները եւ ընտրել պատգամավորները, առ ի պատրաստություն

Շրջանային Ժողովի գումարման։ Արեւմտյանի 18 կոմիտեություններից տասներեքը (երկու երրորդ մեծամասնություն, որ Հ.Յ.Դ. կանոնագրով ճշտված անհրաժեշտ թիվն է Շրջ. Ժողովի գումարման համար), գումարում են իրենց ժողովները եւ ընտրում 41 պատգամավորներ։ Մնացյալ հինգ կոմիտեությունները խափանարար (սաբոտաժ) ընթացք են բռնում։ Խափանարար այս ընթացքին նպատակն էր վիժեցնել Շրջանային Ժողովի գումարման համար գոյանալիք անհրաժեշտ մեծամասնությունը։ Դեպքերի հետագա զարգացումները եւ ընթացքը, ինչպես նաեւ մի քանի շարքայինների, որոնց հետ զրույց ունեցանք, հիմնավորում են այն կասկածը, թե ընկերական ընդհանուր ժողովների այդ խափանումը կատարվել էր Բյուրոյի հետ համակարգված կերպով եւ թերեւս նրա թելադրանքով։ Արեւմտյանի շրջանը Դեկտեմբեր 1-ին երկու երրորդ կոմիտեությունների պատգամավորներով (41 պատգամաւոր), կանոնագրային հիմունքներով պատրաստ էր Շրջանային Ժողով գումարելու։

Դեկտեմբերի 2-ին, Բյուրոն Կ.Կ.-ին փոխանցում է Դեկտեմբեր 3-ին նախատեսված Շրջանային Ժողովի գումարումը կասեցնելու որոշումը։ Ընթացավարտ Կ.Կ.-ին համար այս որոշումը անակնկալ էր։ Կ.Կ. հետեւողականորեն փորձում է Բյուրոյի ներկայացուցչի եւ Բյուրոյի այլ անդամների հետ կապ հաստատել՝ պարզելու համար Բյուրոյի որոշման պատճառները եւ առաջքը առնելու հետագա բարդությունները, Բյուրոն անպատասխան է թողնում թե՛ հեռախոսային կապերը, եւ թե՛ հեռախոսային հաղորդագրությունները։ Կ.Կ.-ի ներկայացուցիչ՝ Կարմեն

Օհանյանի եւ Կ.Կ.-ի անդամ Ավետիք Իզմիրլյանի կողմից մնայուն կերպով եւ օրերի վրա երկարող անձնական հեռախոսային կապ հաստատելու փորձերը Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր Խաչատուրյանի հետ մնում են անարձագանք: Կ.Կ.-ն թիվ 52-709 նամակով դիմում է Բյուրոյին, որի մեջ մատնանշում է բոլոր այն դժվարությունները, որոնք հնարավոր էր եղել դիմագրավել կոմիտեությունների ընկերական ընդհանուր ժողովների գումարման հաջողության համար, առաջարկում է մնացյալ հինգ շրջաններին հավելյալ առիթ տալ, որպեսզի գումարվելիք Շրջանային Ժողովին ներկայացված լինեն բոլոր կոմիտեությունները եւ միասնաբար քննարկեն շրջանը հուզող խնդիրները եւ համապատասխան լուծումներ գտնեն: Բյուրոն այս նամակը եւս թողնում է անպատասխան:

Ընտրված պատգամավորների կողմնորոշումը ճանաչելով, Բյուրոն հասկացել էր, որ հակակշիռ պիտի չունենա գումարվելիք Շրջանային Ժողովի վրա եւ իրեն ի նպաստ Կ.Կ. ընտրելու հույսերը ի դերեւ են ելել: Ավելի քան երեք շաբաթ տեւած լռությունից հետո, Բյուրոն դիմում է աննախընթաց եւ անբացատրելի մի քայլի՝ մամուլով (ֆեյսբուքյան էջով) հայտարարում է նոր Կ.Կ.-ի նշանակումը: Բյուրոն ի հեճուկս շրջանի ընկերների մեծամասնության կամքին, Կ.Կ. նշանակում է անձանց. Ռոստոմ Այնթաբլյան, Քնար Գիթաբջյան, Կեվ Իսքաջյան, Հրայր Կարապետյան, Միզանուշ Մելքոնյան, Մելքոն Մելքոնյան, Մխիթար Մուրադյան, Վիգեն Պապիկյան, Ստեփան Բոյաջյան, Վիգեն Սոսիկյան եւ Սթիվ Դադայան

Ի՞նչն էր անբացատրելին եւ աննախընթացը Բյուրոյի այս որոշման:

Հ.Յ.Դ. կանոնագրով, գերադաս մարմինը կարող է նշանակել ստորադաս մարմին: Ինչպես նշվեց, անցյալում հաճախ պատահել են նմանօրինակ դեպքեր, երբ Բյուրոններ այլ շրջաններում նշանակել են Կ.Կ. կամ Կ.Կոմիտեներ: Այս իմաստով հակականոնագրային ոչ մի քայլ չկա: Բայց առհասարակ նշանակումներ կատարվել են ժողովների ավարտին: Պատահել է նաեւ, որ գերադաս մարմինները կազմակերպական թերացումների կամ այլ պատճառներով լուծեն ստորադաս մարմինը եւ առանց ժողովի գումարման (զանց առնելով նաեւ նրա նախապատրաստական աշխատանքները) նշանակեն իրենցից ստորադաս մարմին: Արեւմտյանի Կ.Կ.-ն Շրջանային Ժողովի նախապատրաստական աշխատանքներին սկսել էր Բյուրոյի գիտությամբ եւ նրա հաւանությամբ: Այսինքն Կ.Կ.-ն որպես մարմին թերացում չուներ եւ չէր լուծարվել: Աւելին, Շրջանային Ժողովի նախապատրաստական աշխատանքները, հակառակ համավարակի պայմաններին, կարելի եղավ իրագործել, որ ցուցանիշ է կազմակերպական բնականոն ընթացքի: Շրջանը նաեւ կանոնագրով ճշտված պայմանները ամբողջացնում էր ժողով գումարելու համար: Այստեղ նաեւ հարց է ծագում, որ Բյուրոն ինչո՞ւ համամիտ չեղավ ժողով չգումարած կոմիտեություններին երկրորդ առիթ տալու Կ.Կ.-ի գրավոր առաջարկին: Այս մասին, ավելի ուշ իր շարքերին Բյուրոն սխալ տեղեկություն տարածեց, հայտնելով թե երկու երրորդ մեծամասնություն չի գոյացել Շրջանային Ժողովի գումարման համար, որպեսզի Կ.Կ. նշանակելու իր քայլը համարվի կանոնագրային: Բյուրոն

հանրությունում եւս ապատեղեկատվություն տարածեց։ ՀՅԴ Բյուրոյի անդամ՝ Կիրո Մանոյանը 2021 թ-ի մարտի 12-ին, «Ազատության» հետ իր զրույցի ընթացքում բացահայտ խեղաթյուրում է իրականությունը, արձագանգելով Բյուրոյի հասցեին հնչող մեղադրանքներին, երբ ասում է, թե արեւմտյան Ամերիկայի դաշնակցականների ժողովը հակականոնագրային է. «Կանոնագրով պահանջված պայմանները չէր լրացրել, եւ դրա համար էլ պետք չէր, որ գումարվեր։ Իսկ մնացածը կազմակերպության կանոններով ճշտված աշխատելաձեւ է, որ տարբեր իրավիճակներում կուսակցությունը շարժվելու հնարավորություն է ունենում։ Եւ դա այնպես չէ, որ այս նշանակովի մարմինը առհավետ նշանակված պիտի մնա։ Փորձելու է քովիտի պայմաններում ընտրություններ կազմակերպել եւ այդ ընտրություններն իրենց արդյունքը կտան»։ Իսկ Բյուրոյի անդամներից Արսեն Համբարձումյան, 2021 թ-ի մարտի 12-ին «Հրապարակ» թերթին տված իր հարցազրոյցում, ոչ միայն փաստերը աղավաղում է, այլեւ Բյուրոյի կատարած սխալները բարդում է Արեւմտյանի ուսերին. «ԱՄՆ Արեւմտյան շրջանի կառույցում երկար տարիներ կուսակցական պատասխանատու պաշտոններ վարած մի խումբ, հիմնականում փառատենչությամբ տարված, իրենց մի շարք համախոհներով ու որոշ այլ մոլորյալներով, ՀՅԴ կազմակերպական կանոնների թյուր ու կամայական մեկնաբանություններով խախտել են իրենց դաշնակցականի երդումը… «Այս խումբն ունեցել է խիստ հակակարգապահական ընթացք. ի շարս այլ հակականոնագրային քայլերի՝ «գումարել» է ապօրինի «ժողով» եւ

«ընտրել» ապօրինի «մարմին», որ ապօրինի կերպով հանդես է գալիս «ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտե» անունով, կուսակցության պաշտոնաթերթ «Ասպարեզ»-ը իր վերահսկողության տակ է պահում, զավթել է կուսակցապատկան անշարժ ու շարժական գույքերը ու դրամատնային հաշիվները»…

Նույն Կիրո Մանոյանը, Արսեն Համբարձումանը եւ Բյուրոն սակայն ոչինչ չեն ասում 2021 հուլիսին նշանակյալ Կ.Կ.-ի կազմակերպած Շրջանային Ժողովի մասին, որի գումարման նախապատրաստական ժողովներին մասնակցել են 250-300 կուսակցականներ, որն ամբողջությամբ հակասում է ՀՅԴ կանոնագրին։ Բյուրոյի երկու անդամները նաեւ ոչ մի խոսք ունեն Արեւմտյանի Կ.Կ.-ի թիւ 52-706 նամակի առնչությամբ, որ առաջարկում էր ժողով չգումարած շրջաններին երկրորդ առիթ տալ։ Նրանք միայն հրապարակայնորեն նախանձախնդիր են ներկայանում Դաշնակցության կանոնագիրը հարգելու։ Մի անգամ եւս օգտագործվում են «Ազատություն» եւ «Հրապարակ» լրատվամիջոցները, որոնց միջոցով Արեւմտյանի դեմ քարոզչությունը շարունակվում է։

Դաշնակցության կանոնագիրը հստակորեն նշում է, որ անհաղթահարելի պայմանների բերումով եթե հնարավոր չէ Շրջանային Ժողով գումարել. Բյուրոն իրավասու է Կ.Կ.-ի գործունէության ժամանակաշրջանը երկարաձգել, մինչեւ ստեղծվեն բարենպաստ պայմաններ։ Կանոնագրի այս դրույթը բարոյական պարտաւորության տակ է դնում Դաշնակցական մարմինները, որ նախանձախնդիր լինեն

հաշվետու ժողովների գումարման։ Եղել է, որ Շրջանային Ժողովներ հետաձգվեն նույնիսկ տարիով եւ այս տրամաբանությունը գործել է Լիբանանի կառույցի դեպքում, քաղաքացիական պատերազմի տարիներին։ Դաշնակցությունը ժողովրդավար կուսակցություն է եւ Բյուրոն իր այս քայլով զրկում էր հազարից ավելի դաշնակցականների, որոնք իրենց կամքը արտահայտել էին ընտրելով Շրջանային Ժողովի պատգամավորներ։

Արեւմտյանի պարագան նաեւ տարբերվում մի կարգ այլ շրջաններից։ ԱՄՆ-ի դաշնակցային օրենքները (F.A.R.A - Foreign Agent Registration Act), չի արտօնում որ ոչ շահաբեր կազմակերպություններն ու միությունները դրսից ղեկավարվեն։ Այսինքն այդ կազմակերպությունների պատասխանատու մարմինները պետք է ընտրովի լինեն։ Այսօրինակ օրենք գոյություն ունի նաեւ Հայաստանում։ Կ.Կ. նշանակելով՝ Բյուրոն հակասում էր ամերիկյան օրենքներին եւ որեւէ ժամանակ, Ամերիկայի Դաշնակցային օրենքների համաձայն, նշանակված Կ.Կ.-ն կարող էր օրենքից դուրս հայտարարվել եւ ամբողջ կազմակերպության գոյությունը խնդրո առարկա դառնալ։ Այս կապակցությամբ հիշեցնում ենք, որ մեր զրույցների ընթացքին ի հայտ եկավ, որ 2013 թ-ին ԱՄՆ-ի Արդարադատության Նախարարության կողմից քննություն բացվել է Արեւմտյանի շրջանի գործունեության առնչությամբ, ըստ որի պետք էր ճշտվեր թե արդյո՞ք Արեւմտյան Ամերիկայի կառույցը, հակառակ ԱՄՆ-ի օրենքներին, ղեկավարվում է օտարերկրյա (իմա՝ ՀՀ-ում հաստատված) մարմնի կողմից։ Այդ օրերին

Կ.Կ.-ի իրավաբանները Արդարադատության Նախարարությանը ներկայացրել են Հ.Յ.Դ. ներքին կանոնագիրը, որտեղ հստակորեն հիշվում է Դաշնակցության ապակենտրոնացյալ կառույց լինելու փաստը՝ շեշտելով թե Արեւմտյանը պատկանում է Դաշնակցության կազմակերպությանը, հետեւում է նրա գաղափարախոսությանը, այդ կառույցի պատասխանատու մարմինը Հ.Յ.Դ. Բյուրոն է: Նա իր հերթին համադրող մարմին է եւ ունի բարոյական հեղինակություն: Իսկ Արեւմտյան Ամերիկայի Դաշնակցական կառույցը գործում է երկրի օրենքների համաձայն: 2013 թ-ի հունիսին, Կ.Կ.-ին ուղարկված նամակով, նախարարությունը տեղեկացնում է, թե առայժմ բավարարվել է հետաքննության արդյունքից եւ հարցը համարում է փակված: Այս հետաքննություններին եւ քննարկումներին մասնակից եղել է այդ օրերի Բյուրոյի անդամ Հակոբ Տեր Խաչատուրյանը: Արխիվներում գոյություն ունեցող ե-նամակները հաստատում են, որ Բյուրոն ընդգրկված եղել է այս աշխատանքներին:

Բյուրոյի այս քայլը խախտում էր Դաշնակցության կանոնագրի հիմքը հանդիսացող ապակենտրոնացյալ դրության սկզբունքին: Այս սկզբունքը անցյալում եւ միշտ Դաշնակցության հաջողության գրավականն է հանդիսացել եւ այդ սկզբունքի ոգիին անսալը Դաշնակցության գերագույն մարմնի համար պետք է դառնար հիմնական ուղղություն: Այս ծիրից ներս Բյուրոն անտեսած էր կարեւոր մի հանգամանք եւս: Բազմաթիվ երկրներում գործելով՝ նույն կազմակերպական սկզբունքներով, Բյուրոն նաեւ պարտավոր էր նկատի

առնել յուրաքանչյուր երկրի քաղաքական, քաղաքակրթական եւ ընկերա-հոգեբանական պայմանները։ ԱՄՆ-ն հանդիսանալով ժողովրդավար եւ ժողովրդավարության ջատագով երկիր, կարելի չէ ժողովրդավարությունը, այսինքն ընտրության գործընթացը կասեցնել։ ԱՄՆ-ում դաշնակցականի համար անհասկնալի է մարմին նշանակելու դրույթը, նույնիսկ եթե ան գոյություն ունի Հ.Յ.Դ. կանոնագրում։ Նման երկրում, որտեղ ժողովրդավարական ընտրությունները հիմքն են ձեւավորվող բոլոր տեսակի մարմինների կամ իշխանությունների, անհասկանալի է նշանակում հասկացությունը, այնտեղ հասակ առած դաշնակցականի համար։ Բյուրոն պարտավոր էր հաշվի առնել նաեւ այս հանգամանքը եւ նրբությունը։

Գ ՄԱՍ

ԱՐԵՒՄՏՅԱՆԻ

55-ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

ԵՒ

ՆՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Կ.Կ. նշանակելու Բյուրոյի քայլը ընդվզում է առաջացնում շրջանի պատգամավորների մոտ: Համախորհուրդ որոշվում է հաջորդ օրն իսկ, 2020 թ-ի դեկտեմբերի 28-ին գումարել Արեւմտյանի 55-րդ Շրջանային Ժողովը, որի միակ օրակարգը լինում է նոր Կ.Կ.-ի ընտրությունը: 55-րդ Շրջանային Ժողովին Կ.Կ. ընտրվում են, Կարմեն Օհանյանը, Հարութ Մկրտիչյանը, Գոգո Թոփալյանը, Արթո Քէօլէյանը, Լեւոն Կիրակոսյանը, Սագո Բերբերյանը, Կարո Իսպենջյանը, Ալիք Ուրֆալյանը, Թորոս Քեչեջյանը, Շահեն Տերտերյանը եւ Վահան Պզտիկյանը: Ժողովը նաեւ միաձայնությամբ որդեգրում է մի բանաձեւ, որը պահանջում էր Նիկոլ Փաշինյանի հրաժարականը: Հետաքրքրականը այն է, որ ըստ այս ժողովի արձանագրություններին, Փաշինյանի հրաժարականի առաջարկը ներկայացվել է Վիգեն Հովսեփյանի կողմից, որին բյուրոյականները միշտ

էլ մեղադրել են որպես «Փաշինյանական»: Առաջարկը միաձայնությամբ որդեգրվում է Շրջանային Ժողովի մասնակիցների կողմից:

Արեւմտյանի պատգամավորների այս քայլը նույնպես հակականոնագրային էր: Որպես դաշնակցականներ, նրանք պարտավոր էին առաջին հերթին ընդունել Բյուրոյի որոշումը եւ ապա դիրքորոշվել: Արդյո՞ք պետք չէր կազմակերպական նոր իրավիճակ ստեղծել եւ նոր Շրջանային Ժողով պահանջել: Այս քննարկումը կարող էր բազմաթիվ մեկնաբանությունների եւ կարծիքների դուռ բացել եւ ներկազմակերպական վիճակը կարող էր ավելի վատթարանալ: Փաստը այն է, որ Շրջանային Ժողով գումարելով, պատգամավորները մերժեցին ենթարկվել Բյուրոյի որոշմանը եւ ամբողջ կուսակցությունը հայտնվեց կազմակերպականորեն նոր իրականության առաջ:

Այս ընտրությամբ Արեւմտյանի շրջանը եւ առհասարակ Դաշնակցությունը կազմակերպական տագնապի աննախընթաց մի նոր փուլ էր թեւակոխում: Փաստորեն, Բյուրոյի որոշումով եւ Շրջանային Ժողովի գումարումով նույն շրջանում գոյանում էր երկու Կ. Կոմիտե:

Շրջանային Ժողովի գումարումը եւ նոր Կ.Կ.-ի ընտրությունը հակականոնագրային քայլ եւ անջատողական շարժում համարելով, Բյուրոն այդ ժողովի գումարումը եւ նրա կողմից Կ.Կ.-ի ընտրությունը հայտարարում է անօրինական, կանոնագրի խախտում եւ գերադաս մարմնի որոշումների դեմ ըմբոստացում եւ դիմում է կարգապահական տնօրինումների: Ժամանակի ընթացքում շուրջ 100 շարքայիններ

(ընտրյալ թէ նախկին Կ.Կ.-ի անդամներ, շրջանի վաստակավոր եւ հեղինակավոր կուսակցականներ եւ այլն) հեռացվում են կամ արտաքսվում են Դաշնակցության շարքերից: Արեւմտյանի պաշտոնաթերթ «Ասպարեզ»-ը համախոհ լինելով Արեւմտյանի Կ.Կ.-ին, հայտարարվում է «բռնագրավված» եւ ոչ-դաշնակցական թերթ: Նրա գլխավոր խմբագիրը՝ Արա Խաչատուրյանը, նույնպես արտաքսվում է: Իսկ ամբողջ Դաշնակցության կառույցը կարգապահական հասկացողությունից ելնելով, մերժում է ճանաչել ընտրված Կ.Կոմիտեն եւ հաղորդակցվել նրա հետ: Միաժամանակ, ի հակառակ դաշնակցական ավանդություններին, տարբեր երկրների մեջ լույս տեսնող Դաշնակցական թերթերը սկսում են հրատարակել նշանակյալ Կ.Կ.-ի հայտարարությունները: Այս քայլով, Բյուրոն եւ Դաշնակցության Կ.Կ.-երը փորձում էին հեղինակություն եւ օրինականություն տալ նշանակյալ Կ.Կ.-ին: Ոչ մի ժամանակ նշանակյալ Կ.Կ. այսքան չի ծանուցվել ո՛չ Դաշնակցական եւ ո՛չ էլ հայկական մամուլում: Նշանակյալ Կ.Կ.-ի հայտարարությունները սկսում են լույս տեսնել նաեւ հայաստանյան որոշ թերթերում, որոնք ֆինանսավորվում են նախկին իշխանավորների կողմից, որոնք երկար տարիներ քաղաքական դաշնակիցներ են եղել Հ.Յ.Դ. Բյուրոյին: Այս ձեւով, Բյուրոն փորձում էր ամբողջությամբ մեկուսացնել ընտրված Կ.Կ.-ն եւ ստեղծել այն պատրանքը թե Արեւմտյանի միակ օրինավոր Կ.Կ.-ն նշանակյալ մարմինն է: Դաշնակցության Բյուրոն մոռանում էր, որ Դաշնակցական մարմիններին բարոյական հանգամանք եւ օրինական հեղինակություն տվողը ո՛չ

դաշնակցական եւ ո՛չ էլ հայաստանյան վճարովի մամուլն է, այլ Դաշնակցական շարքայիններն են, որոնց ընտրելու իրավունքը խախտվել էր Արեւմտյանը մեկուսացնելու պատճառով։ Նշանակյալ Կ.Կ.-ն, զրկված լինելով իր խոսքը տարածելու հարթակի գոյությունից, («Ասպարեզ»ը վերահսկվում էր Արեւմտյանի Կ.Կ.-ի կողմից), ստեղծվում է համացանցային մի թերթ, «Օրակարգ« անունով, որ դառնում է բյուրոյական Կ.Կ.-ի պաշտոնաթերթը։

Իր առած կարգապահական քայլերին զուգահեռ, 2021 թ-ի հունվարի 14-ին, Բյուրոն հրավիրում է Արեւմտյանի կուսակցականները զեկուցական հանդիպումի, Կ.Կ.-ն նշանակելու իր քայլը արդարացնելու եւ բացատրելու։ Շրջանի կուսակցականների մեծամասնությունը մերժում է ներկա գտնվել այս հանդիպմանը։ Թվական առումով այս հանդիպման ձախողումը հուշում է, որ Շրջանային Ժողով գումարելու որոշումը վայելում էր շրջանի կուսակցականների մեծամասնության համամտությունը։ Շրջանի անդամների այս կեցվածքը 2015 թ-ից սկսյալ Արեւմտյանի նկատմամբ Բյուրոյի վարած քաղաքականության դրսեւորումն էր, որ Բյուրոն մինչեւ վերջ էլ չի ուզել հասկանալ, տուրք տալով անձնական-անհատական կրքերին եւ փառասիրություններին։ Ինչպես նշեցինք, շրջանի ըմբոստացումը հակադարձություն էր նրա նկատմամբ եղած հալածական մթնոլորտի, նրա նկատմամբ տրված որոշումներին եւ ուրեմն կանխօրոք ծրագրված չի եղել։ Այս պատճառով էլ Բյուրոյի կողմից նշանակված Կ.Կ.-ի մերժումը միտում չուներ անջատվել Դաշնակցության կառույցից եւ առանձին գործել։

Ամբողջատիրական այս ձգտումը, որ բացահայտորեն երեւում է Բյուրոյի գործունեության մեջ եւ որի հիմքերը ամրացվեցին վերջին քսան տարիներին: Բյուրոյի նախկին ներկայացուցիչ՝ Հրանտ Մարգարյանին հաջողվել էր պառակտում առաջացնել Արեւմտյանի եւ ամբողջ կուսակցության միջեւ: Նոր ներկայացուցիչ՝ Հակոբ Տեր Խաչատուրյանը անձնական փառասիրության համար զոհել էր Դաշնակցության միասնությունը: Իսկ Դաշնակցության պառակտումից եւ տկարացումից ովքե՞ր կարող էին ուրախանալ կամ օգտվել...

Ահավասիկ կազմակերպական այս պառակտումով Դաշնակցությունը ավելի տկարացած պիտի շարունակեր քաղաքական իր գործունեությունը Հայաստանում եւ սփյուռքում 2021 թ-ից սկսյալ:

Բանակցություններ

Դեկտեմբերի 28-ին ընտրված Կ.Կ.-ն, հակառակ Բյուրոյի կողմից իր անդամների նկատմամբ կատարված կարգապահական տնօրինումներին ինչպես նաեւ Կ.Կ.-ին եւ այլ կուսակցականների դեմ տարվող վարկաբերկման արշավին, նախաձեռնում է Բյուրոյի հետ բանակցություններ, ծագած տագնապը բարվոք ձեւով լուծելու համար։ Բանակցությունները հեշտ պիտի չլինէին։ Մի կողմից նժարի վրա էր Բյուրոյի վարկը եւ հեղինակությունը, մյուս կողմից Արեւմտյանը հիմք էր ընդունել կանոնագրով ճշտված ժողովրդավարությունը եւ ապակենտրոնացումը։ Երկու կողմերն էլ պիտի փորձէին ընդունելի դարձնել իրենց պայմանները։ Բյուրոն, որպես Դաշնակցության կանոնագրի մեկնաբան եւ կուսակցության բարձրագույն մարմին, նախանձախնդիր էր, որ Կ.Կ. նշանակելու իր որոշումը ամեն գնով հարգվի, որից հետո կարելի կլինի քննարկել այլ խնդիրներ։ Արեւմտյանի Կ.Կ.-ն հենվելով իր շրջանի ընկերների մեծամասնության աջակցության եւ կանոնագրի եւ երկրի օրենքների առանձնահատկությունների վրա, փորձում է միջին լուծում գտնել ծագած տագնապը հավելյալ բարդացումներից հեռու պահելու համար։ Բանակցությունները տեւում են ավելի քան երկուսուկես տարի։ Տարվող բանակցություններին զուգահեռ, կողմերը շարունակում են մնալ իրենց կեցվածքին։ Մի կողմից Բյուրոն բանակցելով հանդերձ շարունակում է կարգապահական տնօրինումները,

որոնց թիվը հասնում է 100-ի, իսկ Արեւմտյանի Կ.Կ.-ն գործում է որպես Արեւմտյան Ամերիկայի Դաշնակցության բարձրագույն մարմին, իր շուրջ համախմբելով իրեն համախոհ կուսակցականները։

Բանակցություններին զուգահեռ կատարվող իրադարձությունները անպայմանորեն իրենց ազդեցությունը ունեցան ընդհանուր մթնոլորտի , շարունակականության եւ ի վերջո դրական հանգուցալուծման վրա։ Առաջին հանգրվանում Բյուրոն անզիջող էր եւ կարգապահական հասկացությամբ պահանջում էր իր որոշումի գործադրությունը։ Մինչդեռ Արեւմտյանը կրկնում էր իր հիմնական տեսակետը, թէ պետք է վերադառնալ 2020 թ-ի դեկտեմբերի իրավիճակին եւ ժողովրդավարությամբ լուծել առկա տարակարծությունները։ Բանակցություններին զուգահեռ ընթացող դատական գործընթացները ինչպես նաեւ Հայաստանում տեղի ունեցող քաղաքական գործընթացները, ժամանակի ընթացքում մղեցին Բյուրոյին, որ սկսի ետդարձ կատարել իր պայմաններից։ Մասնավորաբար 2023 թ-ի Հուլիսին Վերաքննիչ Դատարանին կողմից ի նպաստ Արեւմտյանի Կ.Կ.ին արձակված վճիռը հանգուցալուծման սկիզբ դրեց։ Կարելի է ասել նաեւ, որ Հայաստանում տեղի ունեցող քաղաքական դեպքերի զարգացումները, որոնք Դաշնակցության ի նպաստ չէին ընթանում, նույնպես ազդեցին Բյուրոյի զիջողականություն որդեգրելու քաղաքականության վրա։

Բանակցությունները երբեմն ընդհատումներով, սակայն միշտ էլ շարունակվեցին: Արեւմտյանը բանակցությունների հիմք դրել էր հետեւյալ կետերը.

Ա. - Բյուրոյի կամ նշանակված մարմնի կողմից տնօրինված բոլոր պատիժների բեկանում:

Բ. - Հայտարարել նոր Շրջանային Ժողովի գումարում՝ ժողովրդավարական սկզբունքով, բոլոր ընկերների մասնակցությամբ:

Գ. - Բոլոր կալվածներն ու գույքերը փոխանցել Շրջանային Ժողովին մասնակցած պատգամաւորների կողմից օրինապես ընտրված Կենտրոնական կոմիտեին:

Շրջանային Ժողովի գումարումից օրեր անց, 2021 թ-ի հունվարին Արեւմտյանի Կ.Կ.-ի անդամներ Կարմեն Օհանյանը եւ Գոզո Թոփալյանը «Զում»ով հանդիպում են ունենում Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր Խաչատուրյանի եւ Բյուրոյի անդամ Վիգեն Յակուբյանի հետ: Այս հանդիպումը ավարտվում է Բյուրոյի կողմից տրված սպառնալիքներով եւ իրավասությունների հանձնման ժամկետերով:

Մի քանի օր հետո, դարձյալ 2021 թ—ի հունվարին, հանդիպում է կայանում Կ.Կ.-ի անդամներ՝ Կարմեն Օհանյանի, Գոզո Թոփալյանի եւ Բյուրոյի անդամներ Վիգեն Յակուբյանի եւ Արամ Գալուստյանի միջեւ: Բյուրոյի կողմից լիազորված բանագնացները առաջարկում են բոլոր կալվածները եւ նրանց տնօրինման իրավասությունները փոխանցել

նշանակված Կ.Կ.-ին, փոխարենը Բյուրոն խոստանում էր կարգապահական տնօրինումները վերանայել: Արեւմտյանի ընկերների կողմից առաջարկվում է վերադառնալ տագնապը նախորդող ժամանակաշրջան: Լուծման տեսակետների այս տարբերության հետեւանքով այս հանդիպումը նույնպես ապարդյուն է անցնում:

Երկրորդ հանդիպումից անմիջապես հետո, 2021 թ-ի հունվարին, Բյուրոյի հրավերով շրջանի վաստակավոր ընկերներ Նշան Փիրումյանը, Մարտիկ Գաբուդյանը եւ Վահե Հովակիմյանը հանդիպում են ունենում Բյուրոյի անդամ Վիգեն Յակուբյանի հետ: Վերոնշյալ երեք ընկերների կողմից ներկայացվում է հարցի լուծման մի ուղեցույց: Բյուրոյի բանագնացը խոստանում է առաջարկված կետերը ներկայացնել Բյուրոյին: Այս հանդիպմանը հաջորդում են Արեւմտյանի մի շարք կուսակցականների հեռացումներ եւ արտաքսումներ Դաշնակցության շարքերից:

2021 թ-ի մարտի սկզբին, Բյուրոյի անդամ Վիգեն Յակուբյանի միջնորդությամբ հեռաձայնային հանդիպում է կայանում Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր Խաչատուրյանի եւ Արեւմտյանի Կ.Կ.-ի անդամ Գոգո Թոփալյանի եւ Արեւմտյանի կուսակցականներից Վիգեն Հովսեփյանի միջեւ: Բյուրոյի ներկայացուցիչը պահանջում է, որ նրանք միջնորդ հանդիսանան, որպեսզի ընտրված Կ.Կ.-ն անմիջապես բոլոր կալվածները փոխանցի Բյուրոյի կողմից նշանակված Կ.Կ.-ին եւ

հրապարակայնորեն հրաժարական ներկայացնի: Այս հանդիպման էլ ոչ մի հասկացություն չի գոյանում:

2021 թ-ի մայիսին Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր Խաչատուրյանի Լոս Անջելես այցելության առիթով, Արեւմտյանից մի խումբ կուսակցականների միջնորդությամբ եւ հորդորով (խումբը ներկայացնում էր Շանթ Բաբուջյան անունով մի շարքային) Կ.Կ.-ի ներկայացուցիչ Կարմեն Օհանյանը գրավոր դիմում է կատարում Բյուրոյի ներկայացուցչին՝ հանդիպումի առաջարկով: Հակառակ նախօրոք տրված հավաստիացումներին թե անպայման հանդիպում տեղի պիտի ունենա, դիմումը մնում է անպատասխան: Բյուրոյի ներկայացուցիչը հայտնել է միջնորդներին թե չի ուզում Դաշնակցությունից «արտաքսվածների» հետ հանդիպել:

2021 թ-ի հուլիս ամսվան սկիզբին, շրջանի կուսակցականներից Վիգեն Հովսեփյանը, անձնական նախաձեռնությամբ հեռաձայնային գրավոր պատգամ է հղում Բյուրոյի 5 անդամների՝ Հ. Տեր Խաչատուրյանին, Ա. Գալուստյանին, Վ. Բաղումյանին, Մ. Փափազյանին եւ մինչ այդ Բյուրոյից հրաժարած Վ. Յակուբյանին: Վիգեն Հովսեփյանը ահազանգում է թե իր ունեցած տեղեկութիւնների համաձայն. դատական հարցերը (որոնք արդեն ընթացք էին առել) շուտով մտնելու են լրջագույն հանգրվան եւ խնդրում է Բյուրոյին անմիջական ուշադրությունը այս հարցի վրա, հավելյալ բարդացումները կանխելու համար: Այս խնդրանքը նույնպես անարձագանք է մնում:

Բանակցությունների այս հանգրվանին զուգահեռ, Բյուրոյի նշանակած Կ.Կ.-ն, 2021 թ-ի հունիսին, կազմակերպում է Շրջանային Ժողով՝ ընտրելու նոր Կ.Կ.: Շրջանային Ժողովի ամբողջ գործընթացին (ընկերական ընդհանուր ժողովներ եւ Շրջանային Ժողով) մասնակցում են 250-300 կուսակցականներ: Փոքրամասնություն, որ ո՛չ բարոյական եւ ոչ էլ ներկայացուցչական հեղինակություն կտա Դաշնակցական որեւէ մարմնի: Սակավաթիվ շարքայինների այս մասնակցությունը մեկ անգամ եւս կգա հաստատելու թե 2020 թ-ի Դեկտեմբեր 28-ին Շրջանային Ժողովի կողմից ընտրված Կ.Կ.-ն վայելում էր Արեւմտյանի կուսակցականների մեծամասնության զորակցությունը եւ թե դեկտեմբերին Շրջանային Ժողով գումարելու եւ Կ.Կ. ընտրելու որոշումը անհատների կամ մի խմբակի նախաձեռնած շարժումը չէր, այլ ուներ տարերային բնույթ: Արեւմտյանի կուսակցականների մեծամասնությունը չմասնակցելով այս «ընտրություններին» պատգամեցին, որ իրանք նույնպես տեր եւ պատասխանատու են 55-րդ Շրջանային Ժողովի գումարմանը եւ նրա որոշումներին: Այստեղ պետք է աւելացնել, որ 2022 թ-ի 34-րդ Ընդհանուր Ժողովի մասնակցության նախապատրաստական աշխատանքներին, բյուրոյական Կ.Կ.-ի կազմակերպած ժողովների մասնակցության համեմատությունը մնաց նույնը (250-300 շարքային), ինչ որ մեծ հարցական է ստեղծում Ընդհանուր Ժողովին նրանց մասնակցության շուրջ: Այս ընտրություններից հետո, բյուրոյական Կ.Կ.-ն դաշնակցության պատմության մեջ աննախընթաց շրջաբերականով շրջանի կուսակցականներին հրաւիրում է իրանց հավատարմությունը հայտնելու

իրեն։ 34-րդ Ընդհանուր Ժողովից հետո, նոյնանման շրջաբերական հղում է նաեւ Բյուրոն։ Այս զույգ շրջաբերականները Դաշնակցականորեն անհասկանալի վերաբերմունք են կուսակցականների նկատմամբ եւ հիշեցնում են հավատաքննության դարաշրջանը։

2022 թ-ի հոկտեմբերի 26-ին, Գլենդելի Բելմոնթի Կենտրոնական Կոմիտեի գրասենակում, հանդիպում է տեղի ունենում Կ.Կ-ի մի կարգ անդամների եւ Հ.Յ.Դ. Բյուրոյի միջեւ։ Հանդիպման ընթացքում Բյուրոն ներկայացնում է 9 կետերից բաղկացած լուծման իր առաջարկները։ Կենտրոնական Կոմիտեն քաջալերված բանակցություն ձեռնարկելու Բյուրոյի ցուցաբերած կամեցողությունից, դրականորեն է գնահատում Բյուրոյի կառուցողական կեցվածքը։ Այս նոր առաջարկներով Բյուրոն հրաժարվում էր իր նախկին մոտեցումներից, որոնք միշտ էլ բանակցությունների ընթացքում ներկայացվում էին սպառնալիքներով եւ վերջնագրերով։

Նոյեմբեր 3-ին, Կ.Կ.-ն կազմակերպում է զեկուցական ժողով, որին մասնակցում են կոմիտեություններից ավելի քան 300 հոգի, ինչպես նաեւ Արեւմտյանի վաստակավոր կուսակցականներից շուրջ 50 հոգի։ Այս ժողովին քննարկվում է Հոկտեմբեր 26-ին Բյուրոյի ներկայացրած առաջարկները։ Կենտրոնական Կոմիտեն փոխանցում է Բյուրոյին, որ 9 կետերից բաղկացած առաջարկները կարելի է բանակցությունների համար հիմք ընդունել։ Դեկտեմբեր 16-ին Բյուրոյի հետ հանդիպման ժամանակ՝ Կենտրոնական Կոմիտեն շեշտում է խորհրդակցական

ժողովին մասնակից կուսակցականների նախանձախնդրությունը, որ ամենից կարեւոր խնդիրները, կազմակերպության ապակենտրոնացում եւ ժողովրդավարական սկզբունքներ, պետք է նվիրագործված լինեն որեւէ համաձայնության մեջ, ինչպես նաեւ չեղարկվեն տագնապի հետեւանքով Արեւմտյանի կուսակցականների նկատմամբ տնօրինված կարգապահական որոշումները։ Դեկտեմբերի 16-ի հանդիպմանը Բյուրոն առաջարկում է Կենտրոնական Կոմիտեին հետաձգել կամ ջնջել հունվարի 13-ի մինչ այդ արդէն նախատեսված Շրջանային Ժողովը։ Կենտրոնական Կոմիտեն հստակ բացատրություններ է տալիս Բյուրոյին թե չի կարելի Շրջանային Ժողովի գումարումից հրաժարվել։ Նախատեսված Շրջանային Ժողովի գումարման շուրջ տարակարծությունները պատճառ են դառնում, որ բանակցությունները խզվեն։ Բանակցությունների այս հանգրվանում, Բյուրոյի առաջարկներում կային կետեր, որոնք բանակցությունների առաջին օրից իսկ Կ.Կ.-ին ներկայացված պահանջներն էին։ Այսպես, Կ.Կ.-ն համամիտ էր ստորագրել մի փաստաթուղթ, որով հաստատվում էր, թե բոլոր փոխանցումները պետք է կատարվեն Շրջանային Ժողովի կողմից ընտրված Կ.Կ.-ին (այս կետը կանոնագրով նախատեսված ընթացիկ գործընթաց է) եւ սկսված դատական բոլոր գործընթացները սառեցվեն։ Սակայն Բյուրոն չէր երաշխավորում բյուրոյական Կ.Կ.-ի առած կարգապահական քայլերը բեկանել։ Բյուրոյի կողմից Շրջանային Ժողովի ջնջումի պահանջը ծուղակ էր։ Առաջին հերթին կազմակերպական ընթացիկ կյանքի խախտում էր, իսկ, երկրորդ պիտի հակասեր ԱՄՆ-ի դատարանի որոշմանը, որով նաեւ կասկածի տակ պիտի դրվեր 2020 թ-

ի դեկտեմբերին ընտրված Կ.Կ.-ի օրինականությունը։ Շրջանային Ժողով չգումարելու պարագային, Կ.Կ.-ն թե՛ կազմակերպականորեն եւ թե՛ ամերիկյան օրենքներով պիտի դառնար ոչ-օրինական եւ կուսակցությունը պիտի հայտնվեր շատ ավելի մեծ տագնապի առաջ։ Այս մտահոգություններին եւ կազմակերպական կյանքը հունի մեջ պահելու մտասեւեռումով, Արեւմտյանի Կ.Կ.-ն կազմակերպում է 56-րդ Շրջանային Ժողովը, որ տեղի է ունենում 2023 թի հունվարի 13-15։ Այս ժողովը հանգամանալից կերպով քննարկում է շրջանի խնդիրները։ Նորընտիր Կ.Կ.-ն իր տարածած հայտարարության մեջ իր հանձնառությունն է հայտնում շարունակելու բանակցությունները Բյուրոյի հետ, միավորվելու Դաշնակցության մեծ ընտանիքին, հակառակ այն իրողության, ինչպես նշվում է հայտարարության մեջ, որ բանակցությունները «նուրբ եւ դյուրաբեկ» մի գործընթաց է, որտեղ նվիրագործված պետք է լինեն Հ.Յ.Դ.-ի հիմնական սկզբունքները, կազմակերպության վերաշխուժացման եւ վերաթարմացման համար։ Ժողովին Կ.Կ-ի անդամ են ընտրվում Կարմեն Օհանյանը, Արթո Քյոլյանը, Հարութ Մկրտիչյանը, Վահան Պզտիկյանը, Շահեն Տերտերյանը, Կարո Իսբենջյանը, Մանուկ Չուխաջյանը, Թորոս Քեչեջյանը, Լեվոն Կիրակոսյանը, Հրայր Գութնույանը եւ Թամար Ուրիշյանը։

Բանակցությունների այս անելանելի վիճակը շարունակվում է մինչեւ Հ.Յ.Դ. 34-րդ Ընդհանուր Ժողովը, որ գումարվեց 2023 թ-ի մարտին Հայաստանում։

Մինչ այս բանակցությունները կատարվում էին, անդին սկսել էին նաեւ դատական գործընթացները։ Դատարանի պահանջով, 2023 թ-ի մայիսի 19-ին կողմերի միջեւ Mediation տեղի պիտի ունենար, որտեղ կողմերը պետք է փորձեին մերձեցումի եզրեր գտնել։ Այդ հանդիպման հաջորդած է մէկ այլ հանդիպում եւ նաեւ կողմնակի այլ հանդիպումներ, բայց բոլորը եղել են ապարդյուն խոսակցությունների շարք։ Այս հանդիպումներին նշանակյալ Կ.Կ.-ն ժխտում է նախօրոք Բյուրոյի հետ ձեռք բերված համաձայնության որոշ կետեր, այսպիսով բանակցությունների հաջողության կամ ձախողության ամբողջական պատասխանատվությունը բեռցնելով Բյուրոյի վրա։

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Տարվող բանակցություններին զուգահեռ, դեկտեմբերի 28-ից սկսած իրար էին հակադրվում Արեւմտյանի Կ.Կ.-ն եւ բյուրոյական Կ.Կ.-ը: Այս հակադրությունը առաջին իսկ օրից դուրս եկավ զուտ կազմակերպական բնույթ ունենալու հանգամանքից եւ դարձավ հրապարակային եւ հասարակության սեփականությունը: Կարճ ժամանակ հետո արդեն խնդիրը հասավ ԱՄՆ-ի պետական մարմիններին, իրար դեմ բացված դատերով:

Դատական քաշքշուքները ամենօրյա մաշեցնող մթնոլորտ եւ հոգեվիճակներ ստեղծեցին թե՛ կազմակերպության անդամների մոտ եւ թե՛ առհասարակ գաղութում:

2021թ-ի մայիսի 28-ին, Բյուրոյական Կ.Կ.-ի կողմից, Այտա Տիմեճյանը, Ստեփան Բոյաջյանը եւ Խաչիկ Թազյանը Քալիֆորնիայի Բարձրագույն Դատարանում դատ բացեցին՝ ARF Dashnaktsutyun, Western USA եւ Կենտրոնական Կոմիտեի անհատների դեմ՝ պահանջելով որ դատարանը անվավեր հայտարարի 2020 թ-ի դեկտեմբերի Շրջանային Ժողովը եւ Կենտրոնական Կոմիտեի ընտրությունը: Բողոքի թղթածրարում բողոքարկողները դատարան էին ներկայացրել Հ.Յ.Դ. Կանոնագիրը, ներքին ատենագրությունները, շրջաբերականները, նամակները, արձանագրությունները: Այս ձեւով Դաշնակցության արխիվները ամերիկյան դատարանի սեփականությունը դարձան: 18 2022

թ-ի հունվարին, Քալիֆորնիայի Գերագույն Դատարանը հաստատում է, որ 2020 թ-ի դեկտեմբերին Շրջանային Ժողովը օրինական էր։ Դատարանի հիմնավորումը այն էր, որ հայցվորները փորձում էին տապալել կազմակերպության ժողովրդավարական գործընթացը եւ ժողովրդավարորեն ընտրված Կենտրոնական Կոմիտեն՝ փոխարինել դրսից նշանակված մարմնով։ Այս որոշումը իրավական հիմք էր տալիս ընտրված Կենտրոնական Կոմիտեին որպես կազմակերպության միակ օրինական գործադիր մարմին։ Բողոքարկողները դատարան ներկայացրել էին ներքին այն կանոնագիրը, որ 2013 թ-ին ներկայացվել էր ԱՄՆ-ի արդարադատության (F.A.R.A - Foreign Agent Registration Act), որի համաձայն Դաշնակցությունը ապակեդրոնացյալ կազմակերպություն է եւ չի ղեկավարվում դրսից։ Դատարանի վճիռը ծանր կացության առաջ կանգնեցրեց Բյուրոյին եւ բյուրոյական Կ.Կ.-ն Արեւմտյանում անօրինական մարմին դարձավ։ Այս ձախողությունը բացատրելու եւ արդարացնելու ինչպես նաեւ դատարանինվճիռը մեկնաբանելու համար կազմակերպվում է ԶՈՒՄ-ով ժողով։ Այս հանդիպման ժամանակ կատարվում են բազմաթիվ անճիշտ եւ օրենքին հակասող հաստատումներ՝ մինչեւ իսկ քննադատվում է դատավորը, նրան մեղադրելով որ «ճնշումների» տակ նման վճիռ է արձակել։ Նույն այս հանդիպման ընթացքում քննադատության թիրախ է դառնում նաեւ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. Կաթողիկոսը։

Այս դատը պարտվելուց հետո, հայցվորները սոցիալական ցանցերի վրա տարածում են լուրեր, թե «կեղծ» կանոնագիր է ներկայացվել

դատարանին, որ հիմք է հանդիսացել դատավորի այդ անարդար վճռին եւ վերաքննության հայցով դիմում են Քալիֆորնիայի Վերաքննիչ Ատյանին՝ մերժելով դատական ատյանի որոշումը։ Վերաքննիչ Ատյանի մոտ բացված դատի վճիռը արձակվում է 2023 թ-ի հուլիսին։ Վերաքննիչ Ատյանը իր համաձայնությամբ հաստատում է Դատարանի որոշումը եւ այսպիսով Կ.Կ.-ն ամբողջովին շահում է վերաքննության հայցի դատը։ Վերջնականապես հաստատվում է 2020 թ-ի դեկտեմբերի 28-ն գումարված Շրջանային Ժողովի օրինավորությունը եւ այդ ժողովից ընտրված Կենտրոնական Կոմիտեն հանդիսանում է Հ.Յ.Դ. դաշնակցություն Արեւմտյան Ամերիկայի շրջանում ընդունված միակ օրինավոր Կենտրոնական Կոմիտեն։ Այստեղ ուշագրավ է դատական որոշման մեջ արտահայտված միտքը, որով ամերիկյան դատարանը ուղղակիորեն մեղադրանք է հնչեցնում Հ.Յ.Դ. Բյուրոյի դեմ։

Վերաքննիչ դատարանի որոշման մեջ ասվում է հետեւյալը.

«Բյուրոյի վարքագիծը Հ.Յ.Դ.-Դաշնակցություն Արեւմտյան Ամերիկայի Կանոնագրի խախտում է եւ սպառնալիք՝ կազմակերպության անկախության։ Ինչպես Կենտրոնական Կոմիտեի ատենապետը վկայեց՝ Բյուրոյի որոշումը իրարանցում եւ շփոթ առաջացրեց Հ.Յ.Դ.-Դաշնակցություն Արեւմտյան Միացյալ Նահանգների շրջանում, որովհետեւ շարքային անդամների համար հստակ չէր թե որ մարմինը՝ Կենտրոնական Կոմիտե՞ն, թե՞ Բյուրոն ղեկավարում էր կազմակերպությունը։ Բյուրոյի վարքագծում եւ Հ.Յ.Դ.-Դաշնակցություն

Արեւմտյան Միացյալ Նահանգների շարքերում նրա պատճառած խառնաշփոթի լոյսի տակ, ամբողջությամբ տրամաբանական էր Կենտրոնական Կոմիտեի տեսակետը՝ որ անհրաժեշտ էր Շրջանային Ժողով գումարել կարճ ժամանակամիջոցի ընթացքում՝ ընտրելու համար նոր եւ օրինական Կենտրոնական Կոմիտե: Տրամաբանական է նաեւ Կենտրոնական Կոմիտեի այն տեսակետը, Հ.Յ.Դ.-Դաշնակցություն Արեւմտյան Միացյալ Նահանգների մասնաճյուղերը (կոմիտեությունները) պատրաստ են կարճ ժամանակում ներկա գտնվել Շրջանային Ժողովին, երբ արդեն մասնաճյուղերի մեծամասնությունը ընտրել է իր պատգամավորները: Հետեւաբար, Դատարանը իր ողջամիտ լիազորությունների ծիրում ճիշդ վարվեց, երբ Շրջանային Ժողով գումարելու մեկ օրվան ժամանակամիջոցը գտաւ արդար եւ տրամաբանական, ինչպես սահմանված է թիվ 7511 պարբերության (g) ենթագլխում»:

Վերաքննիչ դատարանի այս որոշումը ծանր հարված էր Բյուրոյին եւ բյուրոյական Կ.Կ.-ին: **«ամբողջությամբ տրամաբանական էր Կենտրոնական Կոմիտեի տեսակետը, որ անհրաժեշտ է Շրջանային Ժողով գումարել կարճ ժամանակամիջոցում՝ ընտրելու համար նոր եւ օրինավոր Կենտրոնական Կոմիտե»**: Այսինքն ԱՄՆ-ի դատարանին եւ հետեւաբար պետության համար օրինական Կ.Կ.-ն պետք է լինի ընտրովի եւ ոչ նշանակովի: Թեպետ այդ մասին Բյուրոն իմանում էր 2013 թ-ից ի վեր:

2022 թ-ի օգոստոսի 22-ին, բյուրոյական Կ.Կ.-ն պարտվում է երկրորդ դատը: Դատը բացվել էր «ACF Գլենդել եւ ACF Նորթ Հոլիվուդ ընդդեմ Հայ Մշակութային Հիմնարկություն» անունով: Այս դատի դեպքում նրա նպատակն էր հրաման ստանալ դատարանից՝ քննելու Հայ Մշակութային Հիմնարկության հաշվետումարները եւ արխիվները: Դատարանը մերժում է այդ խնդրագիրը, որովհետեւ այդ պահանջը կատարվել էր Հ.Յ.Դաշնակցության Արեւմտյան Միացյալ Նահանգների շրջանը եւ Հայ Մշակութային Հիմնարկությունը անիրավորեն ձեռք ձգելու նպատակով: Դատարանը նաեւ հաստատում է որ ACF Գլենտեյլի մասնաճյուղի վարչությունը անօրինական է եւ իրավական հիմք կամ հեղինակություն չունի մասնաճյուղի անունից դատ բացելու: Այս որոշումից հետո. Հայ Մշակութային Հիմնարկության տարեկան ժողովը եւ վարչության ընտրությունը կատարվում է նախատեսված թվականին՝ 2022 թ-ի սեպտեմբերի 7-ին: Բյուրոյական Կ.Կ.-ն դիմել էր դատարան, փորձելով կասեցնել ժողովի գումարումը եւ ընտրության կայացումը: Նույն այս դատական գործընթացի ծիրից ներս, ավելի ուշ, Հայ Մշակութային Հիմնարկության (ACF) ընտրություններին վերաբերող դատական գործը բացել էին ոչ օրինական մասնաճյուղերը՝ թե իրենք մաս են կազմում ACF-ի Գլենդելի, Լա Քրէսէնդայի, Սան Ֆրանսիսկոյի եւ Արեւմտյան Սան Ֆերնանդո հովիտի մասնաճյուղերին: Դատարանը մերժում է նրանց հայցը՝ վավերացնելու անօրինական ACF-ի 2022 թ-ի նոյեմբերին Բըրբենքում կատարած ընտրության արդյունքները, այն համարելով ACF-ի կանոնագրին հակասող: Դատարանը վճռում է նաեւ, որ Հայ

Մշակութային Հիմնարկության (ACF) նոր ընտրություն պետք է տեղի ունենա՝ 2022 թ-ի նոյեմբերին ընտրության փոխարեն, որովհետեւ անորոշություններ կան թե որ կազմերն են հանդիսանում Հայ Մշակութային Հիմնարկության օրինական մասնաճյուղերը այս չորս շրջաններում: Դատական որոշումին համաձայն, երբ որոշվի թե որոնք են օրինական մասնաճյուղերը, այդ չորս մասնաճյուղերը պետք է կատարեն պատգամավորների նոր ընտրություններ, ապա՝ նախքան 2023 թ-ի նոյեմբերը պետք է տեղի ունենա ACF-ի տարեկան նոր ժողով՝ ընտրելու համար ACF-ի վարչությունը: Մինչ այդ, չվիճարկված մասնաճյո ղերի պատգամավորները մնում են նույնը:

Իր հերթին Արեւմտյանի Կ.Կ.-ն դատական հայց ներկայացրեց Դաշնակցային Դատարանում 2021 թ-ին հուլիսի 9-ին ըստ ամերիկյան օրենքների Կ.Կ.-ն պարտավոր է հսկել իր ոչ-շահութաբեր հաշիվների ապահովության վրա:

Դաշնակցային հայցը պահանջում էր.

Ա) վերադարձնել ավելի քան 600,000 դոլարի գումարը, որ գողացվել է ACF-ի Լա Քրասենդայի, Օրեյջ Քաունթիի եւ Սան Ֆրանսիսկոյի Կ.Կ.-ի տեղական հաշիվներից, խախտելով CIVIL RICO-ի կանոնները եւ որոնք փոխանցվել են նոր ու կեղծ կառույցների, որոնք նույնիսկ ոչ շահութաբեր կազմակերպության կարգավիճակ չունեն:

Բ) վերադարձնել նշանակյալ Կ.Կ.-ի կողմից յուրացված ընկերային ցանցերի էջերը, անդամակցության ցանկերը, Trademark-երը եւ գույքերը:

գ) Դատական որոշումով արգելել նշանակյալ Կ.Կ.-ին շարունակել ներկայացնել Դաշնակցություն կազմակերպությունը:

Այս հայցը նաեւ պահանջում էր փոխ-հատուցում իրավաբանական վճարումների եւ դատական ծախսերի համար: Բյուրոյական Կ.Կ.-ը հատուկ դիմումով փորձում է համոզել դատարանին, որ Կ.Կ.-ի հայցը չեղարկվի, սակայն դատավորը անհերքելի փաստերի լույսի տակ որոշում է շարունակել դատական գործը:

2021թ-ի հոկտեմբերի 25-ին, ԱՄՆ-ի Դաշնակցային Դատարանը մերժում է բյուրոյական կենտրոնական կոմիտեի խնդրանքը՝ անվավեր հռչակելու իրենց դեմ ներկայացված հայցերը, որոնք ընդգրկում են մի շարք օրինախախտումներ՝ ներառյալ Դաշնակցության անվան պաշտոնական արձանագրության (Trademark) ապօրեն չարաշահումը եւ ավելի քան 600,000 դոլար գումարի անօրէն յուրացումը: Դաշնակցային Դատարանը նաեւ մերժում է բյուրոյական կենտրոնական կոմիտեի խնդրանքը՝ սառեցնելու Կ.Կ.-ի հարուցած դատական վերոնշյալ գործի ընթացքը, մինչեւ Նահանգային Դատարանում Կ.Կ-ի դեմ իրենց կողմից բացված դատի վերջնական լուծումը:

2021թ-ի նոյեմբերի 24-ին, դաշնակցային Դատարանը մերժում է պաշտպանյալների խնդրանքը, որ անվավեր ճանաչվի եւ լուծարվի իրենց դեմ RICO օրենքի հիմքով բացված քաղաքացիական հայցերի դատական գործը՝ իրավական հիմքերից զուրկ համարելով այս կապակցութեամբ պաշտպանյալներին ներկայացրած հակաճառությունը: ARF

Dashnaktsutyun, Western USA-ը եւ Հայ Մշակութային Հիմնարկութիւնը (ACF) Դաշնակցային Դատարանում դատ էին բացել անօրէն ընկերութիւնների (corporations) դեմ, 2020 թ-ի դեկտեմբերի 27-ին, Բյուրոյի կողմից նշանակված Կենտրոնական Կոմիտեի, ինչպես նաեւ 2021 թ-ի հուլիսին Բյուրոյի կողմից նշանակված Կ.Կ.-ի կազմակերպած Շրջանային Ժողովից ընտրված բյուրոյական Կենտրոնական Կոմիտեի անդամների դեմ: Քաղաքացիական RICO օրենքին հիման վրա բացված դատական գործի մեղադրական պնդումները առնչություն ունեին Հայ Մշակութային Հիմնարկության հաշիվներից անօրեն կերպով գումարներ յուրացնելու, ընկերությունների պաշտոնապես արձանագրված անունները անօրեն կերպով շահագործելու հետ:

Արեւմտյանի ավագ կուսակցականներից Վարդգես Անիվյանը մահացել էր 2013 թ-ին եւ իր ունեցվածքի մի բաժինը կտակել էր Կենտրոնական Կոմիտեին: Ժամանակին հնարավոր չի եղել կտակի գումարի բաժանումը կատարել: 2021թ-ի ապրիլին, այս հարցով զբաղվող Կ.Կ.-ի իրավաբանը, նկատում է, որ Դաշնակցության անունը գաղտնաբար փոխվել է որպես կտակառու եւ փոխարինվել է մի նոր կազմակերպության անունով, որ բյուրոյական Կ.Կ.-ի կողմից ստեղծված կազմակերպություն էր: Կ.Կ.-ն դիմում է դատարան կասեցնելու համար Վարդգես Անիվյանի կտակի բաժանումը՝ մինչեւ պարզվի իրականությունը: ԱՄՆ-ի տեղական օրենքների համաձայն, որեւէ ոչ-շահութաբեր ընկերակցություն օրենքի առաջ պատասխանատու եւ պարտավոր է հսկել իրեն պատկանող

գումարներին եւ ինչքերին։ Այս դատը հետագային վճռվեց ի նպաստ Արեւմտյանի Կ.Կ.-ին։

Արեւմտյանի Կ.Կ.-ի դեմ Անդրանիկ Չարչաֆչյանի, Անուշ Չալյանի եւ Կարեն Եղբայրյանի կողմից բացված դատական գործի դատավարությունը տեղի է ունենում 2023 թ-ի Հուլիսի 5-ին եւ 6-ին Լոս Անջելեսի Գերագույն Դատարանում։ Դատարանը լսում է Տարոն Տեր Խաչատուրյանի, Հովիկ Սալիպայի, Վրույր Ֆրանկյանի, Մելքոն Մելքոնյանի եւ Վահե Պոզոյանի վկայությունները։ Դատարանի աշխատանքային ժամանակացույցի համաձայն դատը դադար է առնում վերսկսելու համար 2023 թ-ի սեպտեմբերի 25-ին։

Բյուրոյական Կ.Կ.-ի, անդամների կամ նրա զորակցողների կողմից ամերիկյան դատարաններում Արեւմտյանի Կ.Կ.-ի դեմ հարուցված դատական գործընթացները չէին կարող կատարուել առանց Բյուրոյի գիտակցության։ Ամերիկյան դատարանների ծախսալից գործընթացը նկատի առնելով, կարելի չէ հավատալ թե Արեւմտյանի Կ.Կ.-ի դեմ բացված դատերը անհատների նախաձեռնություններ էին։ Այս մասին վկայում է նաեւ Բյուրոյի ներկայացուցչի պատասխանը, 2021 թ-ի Մայիսին Գլենտեյլի Ս. Աստվածածին եկեղեցու սրահում Դաշնակցական շարքայինների տված այն հարցին թե Արեւմտյանի հարցերը ինչպիսի ավարտ պիտի ունենան. «Դժբախտաբար նրանք ամերիկյան դատարաններում պիտի ճշդվեն»։

-

ՀՅԴ 34-րդ Ընդհանուր Ժողովը

2020 թ-ի դեկտեմբերին ծայր առած կազմակերպական տագնապը համենում էր արդեն ավելի քան երկու տարի է։ Կազմակերպական այս ոչ նախանձելի իրավիճակին առընթեր Հայաստանում քաղաքական դեպքերը զարգանում էին Դաշնակցության որդեգրած ուղեգծի հակառակ ուղղությամբ։

Արցախյան 44-օրյա պատերազմի պարտությունից հետո, Հայաստանում եւ սփյուռքում օրըստօրե մեծանում է Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջը։ Մինչ այդ Դաշնակցությունը դաշնակցելով 17 քաղաքական այլ ուժերի հետ, ստեղծել էր «Հայրենիքի Փրկության Շարժումը», որ փողոցային պայքարով փորձում էր տապալել Հայաստանի իշխանությունը։

Ստեղծված քաղաքական ճգնաժամին ի տես, 2020 թ-ի ապրիլի 25-ին Հայաստանի վարչապետը հայտարարում է իր հրաժարականը եւ երեսփոխանական արտահերթ ընտրությունների թվական է ճշտվում 2021 թ-ի հունիսի 20-ը։

Այս ընտրություններին Դաշնակցությունը որոշում է մաս կազմել «Հայաստան» դաշինքին, զոր գլխավորում էր Հայաստանի երկրորդ նախագահ՝ Ռոբերտ Քոչարյանը։ Այս դաշինքի մաս կազմեց նաեւ

նորաստեղծ «Վերածնվող Հայաստան» կուսակցությունը։ Քոչարյանի հետ դաշինքը կուսակցականների մի մեծ շերտի կողմից հաշտ աչքով չդիտվեց։ Ընտրություններին Դաշինքը երկրորդ մեծագույն բլոկը դարձավ խորհրդարանում եւ շուրջ տասը դաշնակցականներ դարձան երեսփոխան, սակայն «Դաշնակցության Ֆրակցիա» անունը չհայտնվեց խորհրդարանում։

Ավելի ուշ, այս դաշինքը ընդդիմադիր այլ ուժերի հետ, 2022 թ-ի մայիսին երկրորդ անգամ լինելով դիմեց փողոցային պայքարով Հայաստանի իշխանությունների տապալման։ «Դիմադրություն» անվան տակ գործող այս շարժման առաջնորդը եւ մղիչ ուժը եղավ Դաշնակցությունը։ Սակայն այս շարժումը եւս ժողովրդային ընդունելության չարժանացավ եւ ժամանակի ընթացքում մարեց։ Թե՛ «Հայրենիքի Փրկության Շարժում»-ը եւ թե՛ «Դիմադրություն» շարժումները ավելի հեղինակազրկեցին Դաշնակցության վարկը։ 2022 թ-ի ամռանը, Հայաստանի տարբեր մարզերում եւ քաղաքներում տեղի ունեցած համայնքային ընտրություններին, կուսակցությունը ոչ մի նշանակալից արդյունք չարձանագրեց։ Դաշնակցությունը Հայաստանում այլեւս ժողովրդային հենարան չուներ։

Քաղաքական եւ կազմակերպական աննպաստ այս պայմաններում, բոլոր լուսարձակները կենտրոնացել էին 2023 թ-ի մարտ ամսին նախատեսված Հ.Յ.Դ. Ընդհանուր Ժողովին վրա։ Արեւմտյանի տագնապը կուսակցությունը դրել էր կազմակերպականորեն աննախընթաց եւ բարդ

իրականության առաջ։ Ընդհանուր Ժողովից ակնկալվում էր պատշաճ ձեւով քննարկել կազմակերպական այս տագնապը եւ կուսակցությունը դուրս բերել ոչ-բաղձալի իրավիճակից։ Կազմակերպականորեն մերժված եւ մեկուսացուած Արեւմտյանի Կ.Կ.-ն չկարողացաւ մասնակցել Հայաստանում կայանալիք Հ.Յ.Դ. 34-րդ Ընդհանուր Ժողովին։ Այսուհանդերձ Կ.Կ.-ն շրջաբերականով տեղեկացնում է իր ընկերներին գումարվելիք ժողովի մասին եւ իբրեւ նախանձախնդիր Արեւմտյանի հարցերի լուծման, հորդորում է, որ ընկերները անհատական նամակներով դիմեն նշյալ ժողովին, շրջանում համեցող խնդրի լուծման իրենց պատկերացումները տալու։ Կ.Կ.-ի այս թելադրանքին ընդառաջում են մեծ թվով ընկերներ, որոնք բացատրական նամակներ են հղում Ընդհ. Ժողովին։

Իր հերթին, Կ.Կ.-ն մի ծավալուն բացատրական-նամակ է հղում Ընդհանուր Ժողովին, ներկայացնելով եւ բացատրելով Արեւմտյանի հարցերի էությունը, նրանց զարգացման հոլովույթը եւ վերջապես լուծման իր պատկերացումները եւ առաջարկները։

Թե որքանով Հ.Յ.Դ. 34-րդ Ընդհանուր Ժողովը հանգամանալից կերպով քննարկեց Արեւմտյանի տագնապը, երեւում է նրա կողմից Արեւմտյանին տրված վերջնագրից։ Հիմնվելով Բյուրոյի եւ բյուրոյական Կ.Կ.-ի միակողմանի տեղեկությունների եւ նրանց ներկայացրած զեկուցումների վրա, Ժողովը Արեւմտյանի Կ.Կ.-ին հղում է վերջնագիր, որում պահանջում էր.

1-Ընդունում եք Հ.Յ.Դ. կազմակերպական կանոնները իբրեւ մեր միակ կանոնագիրը:

2-Հ.Յ.Դ.-ին եք վերադարձնում կուսակցության պատկանող բոլոր հաստատությունները, կալվածներն ու նյութական հաշիվները եւ բոլոր պետական դատերը անմիջապես կասեցնում եք:

3-Վերոհիշյալ պայմանները գոհացնելու դեպքում, Ընդհանուր Ժողովը կվերանայի ՀՅԴ Բյուրոյի ձեր հանդեպ տնօրինած պատիժները:

Եւ քանչորս ժամ ժամանակ էր տրվում էր Արեւմտյանին պատասխանելու Ընդհանուր Ժողովի վերջնագրին:

Ակներեւ է, որ այս պայմանները հար եւ նման էին մինչ այդ Բյուրոյի պայմաններին: Ոչ մի ակնարկություն չկա հարցի էության, Դաշնակցականների կանոնագրային իրավունքի խախտման մասին եւ Բյուրոյի կողմից կանոնագիրը կամայականորեն ոտնահարելու մասին: Արեւմտյանի Կ.Կ.-ն բացատրական-պատասխան հղելով վերոնշյալ ժողովի դիվանին, հաստատում է իր պատկանելիությունը Դաշնակցության մեծ ընտանիքին, միեւնույն ժամանակ փոխանցելով թե պատրաստ է բոլոր գույքերը, կալվածները եւ հաշիվները փոխանցել Արեւմտյանի Շրջանային Ժողովից ընտրված Կ.Կ.-ին, առաջարկելով հարցի ամբողջական եւ համապարփակ քննարկում, լուծումներ գտնելու առկա տագնապին: Կ.Կ.-ի այս պատասխանը եւս իր հերթին պարունակում էր նույն մտքերը, որոնք ներկայացվել էին Բյուրոյի հետ իր բանակցությունների ընթացքում: Կողմերը մնում են իրենց տեսակետներին եւ հարցի լուծման իրենց պատկերացումներից զիջում

չեն արձանագրում եւ Հ.Յ.Դ. 34-րդ Ընդհանուր Ժողովը անկարողության է մատնվում տագնապը շրջանցելու։

ԱՄԵՆՕՐՅԱ ՊԱՅՔԱՐ

ԵՒ

ՀԱՆԳՈՒՑԱԼՈՒԾՈՒՄ

Կազմակերպական այս տագնապը չմնաց զուտ կազմակերպական հարց։ Դա իր դրսեւորումները ունեցավ թե՛ Արեւմտյանի շրջանի գաղութում եւ թե առհասարակ հայ կյանքում, ուր գոյություն ունի Դաշնակցական կառույց։ Տագնապի ամբողջ տեւողության ընթացքում (2020 թ-ի դեկտեմբերից մինչեւ 2023 թ-ի սեպտեմբերը) երկուստեք տարվող հակաքարոզչությունը հաւելյալ շիկացումի տարավ մթնոլորտը։ Անհանդուրժողականությունը եւ իրարամերժությունը հասան այն աստիճանի որ նույնիսկ անձնական հարաբերությունները եւ ընկերական մտերմությունները խաթարվեցին։ Շրջանում պատահած յուրաքանչյուր դեպք կամ ձեռնարկ ծառայեց մյուս կողմը վարկաբեկելու աշխատանքին։ Նույնիսկ ընկերային ցանցերը օգտագործուեցին նսեմացնելու Դաշնակցական մարմիններ եւ անհատներ։ Այս մթնոլորտը ամենօրյայ մաշումի պայքարի վերածվեց, որում ներքաշվեցին եւ օգտագործվեցին նույնիսկ Արեւմտյանի Հ.Ե.Դ. եւ պատանեկան միությունները, ՀՕՄ-ը, Համազգայինը, Հ.Մ.Ը.Մ-ը եւայլն։

Արեւմտյանի Կ.Կ.-ն ողջամտությունը ունեցավ հեռու պահելու երիտասարդական եւ պատանեկան միությունները կազմակերպական այս տագնապից եւ կազմակերպական ապառողջ մթնոլորտից։ Հակառակ այն իրողության որ այս երկու միավորները հետեւում էին բյուրոյական Կ.Կ.-ին, Արեւմտյանի Դաշնակցության ակումբները, որոնք գտնվում էին Կ.Կ.-ի վերահսկողության տակ, իրենց դռները բաց պահեցին նրանց առաջ։ Բյուրոյականների կողմից անտեղի կիրք եւ ատելություն սրսկվեց նորահաս սերունդին, որ մասնակից դարձավ կուսակցական եւ ազգային մարմինների եւ անհատ դաշնակցականների ու ազգայինների վարկաբեկման քարոզարշավի աշխատանքներին։ Հաճախ շինծու խնդիրներ ստեղծվվեցին մթնոլորտը թեժացնելու եւ ավելորդ կրքեր հրահրելու, իսկ երբեմն թյուրիմացություններն ու իրավիճակները անհարկի կերպով շահագործվեցին ատելություն սերմանելու։ Այստեղ նշված դեպքերը մի քանի օրինակներ են, որոնք բավարար չափով արտացոլացնում են պատկերը այն մթնոլորտին եւ միջավայրի, որ ապրեց ԱՄՆ-ի գաղութը եւ մանավանդ Դաշնակցության կառույցը 2020 թ-ի դեկտեմբերից մինչեւ 2023 թ-ի սեպտեմբերը։

2021 թ-ի փետրվարին, տեղի է ունենում Արեւմտյանի կոմիտեների ընտրությունները։ Ամսի 26-ին, «Ահարոնյան» (Գլենդեյլ) կոմիտեության ընտրությունների ընթացքում, այլ շրջաններից հավաքված մի խումբ անհատ դաշնակցականներ, ներառյալ Բյուրոյի կողմից նշանակված Կ.Կ.-ի անդամներ, լուտանքներով եւ փողոցային վարքագծով փորձում են խանգարել Դաշնակցության կանոնագրով նախատեսված շրջանի

ընդհանուր ժողովի գումարումը եւ նոր կոմիտեի ընտրությունը: Նրանք նոյնիսկ փորձում են ֆիզիկական ընդհարում հրահրել: Ժողովականների զսպվածությունը եւ ոստիկանության միջամտությունը առիթ չեն տալիս ավելորդ լարվածության: Ժողովը տեղափոխվում է Կ.Կ.-ի շենք եւ հնարավոր է լինում այնտեղ գումարել ընդհանուր ժողով եւ ընտրել նոր կոմիտե:

Արեւմտյանի Կ.Կ.-ի դեմ տարվող այս պայքարը դուրս է գալիս նույնիսկ ԱՄՆ-ի սահմաններից: Արեւմտյանի Կ.Կ.-ի դեմ արշավի համար օգտագործվեց մինչեւ անգամ նախկին քաղաքական բանտարկյալ Համբիկ Սասունյանը, որը Հայաստանում տարբեր առիթներով Դաշնակցականի ոչ-վայել արտահայտություններ եւ հայհոյանքներ է հնչեցնում Կ.Կ.-ի եւ շրջանի Դաշնակցականների հասցեին:

2021 թ-ի ապրիլին, Կ.Կ.-ից մի պատվիրակություն էմեկնում Հայաստան, Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում նահատակված զինվորների ընտանիքներին նյութական օժանդակություն տրամադրելու համար: Այս այցելության ընթացքում, փորձ է կատարվում այցելությունը ամեն գնով ձախողեցնելու եւ առաքելության նպատակը նսեմացնելու: Հայաստանյան կառույցի անդամները համոզում են նահատակների ընտանիքներին, տրամադրված օժանդակությունը մերժելու կամ ետ վերադարձնելու: Այդ ընտանիքներից շատերը ետ են վերադարձնում տրված օժանդակությունը, սակայն հետո զղջումով ներկայանում են պատվիրակության անդամներին՝ պատմելով եղելությունը:

Պատվիրակության անդամներին նկատմամբ արվում են սպառնալիքներ։ Բարեբախտաբար առանց կարեւորություն ընձայելու սպառնալիքներին, նրանք շարունակում են եւ աւարտին հասցնում իրենց աշխատանքը։ Պատմության համար պետք է արձանագրել, որ ի պատիվ այդ պատուիրակության անդամներին նրանք ունեցան բավարար լայնախոհություն, պետական մարմիններին չդիմելու, իրենց դեմ կատարված սպառնալիքներին համար։

2022 թ-ի հունիսի 22-ին, Ռոստոմ եւ Շիրակյան կոմիտեությունների տարածքում տեղի են ունենում Հ.Ե.Դ.ի ձեռնարկներ, տեղական կոմիտեների ամբողջական զորակցությամբ եւ օժանդակությամբ։ Շիրակյան կոմիտեի դեպքում տեղի է ունենում Հ.Ե.Դ. ուխտի ժողովը, իսկ Ռոստոմ կոմիտեի դեպքում՝ Հ.Ե.Դ. ուխտերի միջեւ ֆուտբոլի մրցաշարք։ Շիրակյան կոմիտեի որոշումով նախօրոք արգելվել էր Հ.Ե.Դ. Կենտրոնական Վարչության (ԿՎ) մեկ անդամի մուտքը կենտրոն նրա խնդրահարույց պահվածքի պատճառով, որի համար էլ նա երկար ամիսներ սառեցվել էր նույնինքն ԿՎ-ից, որի անդամ էր։ Իսկ Կ.Վ.-յան մի անդամ, որ մերժել էր գործակցել Ռոստոմ կոմիտեի հետ, կոմիտեն ապահովական նկատառումներով մերժում է նրան ներկա գտնվել տեղի ունենալիք միջոցառման։ Զույգ այս պատահարները օգտագործվում են բյուրոյական Կ.Կոմիտեի կողմից ապատեղեկատվություն տարածելով եւ երիտասարդները ապակողմնորոշելով։ Երիտասարդականի պատասխանատուների կողմից, նման կեցվածքները ավելի հաճախակի

են դառնում, որը իր վատ անդրադարձն է ունենում երիտասարդականի անդամների Դաշնակցական կազմավորումի վրա։

2023 թ-ի մարտի 21-ին Կ.Կ.-ից մի պատվիրակություն հանդիպում է ունենում Լոս Անջելեսում Հայաստանի հյուպատոսի տեղակալ Նազելի Համբարձումյանի հետ։ Իսկ նույն ամսվան 31-ին՝ Վաշինգտոնում հանդիպում է կայանում Հայաստանի դեսպան Լիլիթ Մակունցի հետ։ Այս հանդիպումները բուռն կերպով քննադատվում են բյուրոյական Կ.Կ.-ի եւ նրա հետեւորդների կողմից եւ ընկերային ցանցերի վրա ցեխարձակումներ եւ զրպարտություններ են հնչեցնում ԱՄՆ-ի Կ.Կ.-ի հասցեին։ Այս մասին բյուրոյական Կ.Կ.-ն հրապարակում է նաեւ հաղորդագրություն։

2023 թ-ի ապրիլին՝ Խթման գիշերը եւ Զատիկի օրը, Գլենդեյլի Սուրբ Աստվածածին եկեղեցում Հ.Ե.Դ.-ի կողմից առանց արտոնության թռուցիկներ են բաժանվում։ Տարիների սովորության համաձայն համայնքային ՈՐԵՒԷ կազմակերպություն (ներառյալ կոմիտեները, Կ.Կ.-ի հանձնախմբերը, Հ.Ե.Դ.-ը եւ ուրիշներ) պարտավոր են եղել հարգալից լինել թռուցիկներ բաժնելու կամ ապրանքներ վաճառելու վայրին՝ եկեղեցու հոգաբարձության իրավասությունների հանդեպ։ Այս միջոցառման համար Էնսինոյի կանգառը օգտագործելու համար անհրաժեշտ արտոնությունը խնդրվել եւ առնվել էր. մինչդեռ Գլենդեյլի եկեղեցուց արտոնություն չի խնդրվել եւ հետեւաբար կայանատեղիի պահակները չեն արտոնել թռուցիկների ցրումը։ Այս դեպքի առիթով ՀԵԴ-

ի անդամները մեծ աղմուկ բարձրացրին, մեղադրելով թե Կ.Կ.-ն արգելք է Հայկական Ցեղասպանության մասին թռուցիկների ցրումին։ Հայկական Ցեղասպանության զոհերի հիշատակի օրը եւս շինծու կերպով զոհ է դառնում կազմակերպության ներքին վեճերին։ Մի պարզ զուգադիպությամբ, այս դեպքի հաջորդ օրը՝ երկուշաբթի երեկոյան, մի «հանրային ֆորումի» ընթացքում, հայ երիտասարդներ եւ Հ.Ե.Դ-ի անդամներ դուրս են դրվում Բըրբենքի Հայ կենտրոնից, որովհետեւ նրանք «կարող էին խնդրահարույց դառնալ»։ Երկուշաբթի օրը, երիտասարդներին ձեռնարկից վռնդելու այս արարքը նպատակ ուներ ծածկել Հայաստանի ներկա կացության հետ առնչություն ունեցող մտահոգություններին անդրադարձող հարցերին պատասխանելու իրենց անկարողությունը։ Այս բոլորը տեղի են ունենում, ինչպես ծանուցվել էր, «հանրային ֆորում»ի ընթացքում։

Այս դեպքերին զուգահեռ ամենօրյա հակաքարոզչություն է տարվում մասնավորաբար սոցիալական ցանցերի վրա։ Կեղծ (fake) էջերով անդադար վարկաբերկիչ տեղեկություններ եւ ստեր են տարածվում ։ Կողմերը իրար ամբաստանում են այս հակաքարոզչության մեջ։

Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին եւս անմասն չի մնում այս թոհուբոհից։ 2023 թ-ի ապրիլին, Հ.Յ.Դ. 132-ամյակի տոնակատարության ընթացքում, բյուրոյական Կ.Կ.-ն պարտք է դնում թեմի առաջնորդի վրա խոսք առնել եւ գովաբանել բյուրոյական Կ.Կ.-ն։ Այս իրողությունը

աննախընթաց էր Դաշնակցության պատմության մեջ: Առհասարակ, Դաշնակցության ձեռնարկներին հայ կղերականների ներկայությունը բարոյական իմաստ ունի եւ լավագույն դեպքում նրանք ձեռնարկների ավարտին «Պահպանիչ» աղոթքով փակել են ձեռնարկը: Այս գրգռիչ ոճը հարիր չէր Դաշնակցության բարոյական հատկանիշներին եւ քաղաքական իր դավանանքին: Այս արարքով բյուրոյական Կ.Կ.-ն նպատակադրել էր հեղինակություն ձեռք բերել, աջակից ունենալով հայ կղերականությունը:

Նմանօրինակ դեպքերը միմիայն վնասեցին Դաշնակցության վարկին: Գիտակցված կամ ոչ, այս արարքները հեռու էին Դաշնակցականորեն գործելու եւ այդ աշխատանքին գաղափարական հունավորում տալու ամեն սկզբունքից:

Գաղութում տիրող անհանդուրժական այս մթնոլորտին զուգահեռ, Արեւմտյանի Կ.Կ.-ն ձեռնարկեց իր գործունեության ծիրը ընդլայնելու աշխատանքը: 2021 թ-ի ապրիլին Հայաստան այցելած Կ.Կ.-ի պատվիրակությունից շուրջ մեկ տարի անց, երկրորդ պատվիրակություն է գործուղվում Հայաստան: Այս պատվիրակության նպատակներից էր բարեսիրական ներդրումներ կատարել Հայաստանում: Մշակվեցին եւ գործադրվեցին Թալինի գյուղերում մշակութային օջախների վերանորոգման աշխատանքներ կատարել: Արեւմտյանի «Լեռնավայր» եւ «Ա. Շիրակյան» կոմիտեությունների կազմակերպությամբ կատարվում են

դրամահավաքի ձեռնարկներ եւ Հայ Մշակութային Հիմնադրամի անունով տրամադրվում են այդ ծրագիրների իրագործմանը: 2022 թ-ի ամռանը, հիմնովին վերանորոգվում է Թալինի Զովասար գյուղի դպրոցը: Նույն տարվա աշնանը սկսվում է Կաթնաղբյուր գյուղի զբոսավայր-պուրակի շինությունը, որն ավարտվում է 2023 թ-ին: Միաժամանակ վերանորոգվում է Բազմաբերդ գյուղի դպրոցի թատերասրահը, որ իբրեւ մշակութային օջախ ծառայում է նաեւ շրջակա մի քանի գյուղերին:

Հանգուցալուծում

Հ.Յ.Դ. 34-րդ Ընդհանուր Ժողովի ավարտից հետո, նորընտիր Բյուրոյի կազմից Խաժակ Մկրտիչյանը մեկնում է ԱՄՆ, նոր բանակցություններ վարելու Կ.Կ.-ի հետ: Բյուրոյի այս նախաձեռնությունը ուներ բազմաթիվ պատճառներ: Բյուրոյական Կ.Կ.-ն ինքզինք չէր կարողացել հաստատել որպես Դաշնակցական մարմին նույնիսկ կուսակցական շրջանակներում: Նրա գումարած երկու Շրջանային Ժողովների մասնակցության պատկերը չէր գերազանցել 300 շարքայիններ: Կալիֆորնիայի վերաքննիչ Դատարանի որոշմամբ, 55-րդ Շրջանային Ժողովին ընտրված Կ.Կ.-ն Արեւմտյանի միակ օրինավոր Կ.Կ.-ն էր: Այս որոշումը գործելու անհնարինություն պիտի ստեղծեր բյուրոյական Կ.Կ.-ին: Որոշ տեղեկությունների համաձայն, զրկվելով Արեւմտյանի նյութական մատակարարումից, կուսակցությունը մատնվել էր նյութական մեծ դժուարությունների: Իսկ արտաքին ճակատի վրա, Հայաստանում, Դաշնակցությունը խորհրդարանից դուրս գրեթե լուսանցքայնացվել էր: Լիբանանի երեսփոխանական ընտրությունների արդյունքների համաձայն, կուսակցության վարկանիշը ավելի էր անկում արձանագրել: Այս պատճառով էլ բանակցության սեղանի շուրջ Բյուրոյի

դիրքերը տկարացել էին։ Մինչդեռ Արեւմտյանը, հակառակ իր մեկուսացումին, գոնե իր շրջանում շարունակում էր գործել ընթացիկ ձեւով։ Վերջին երկուսուկես տարիների ընթացքում կատարված ձեռնարկների հաջողությունը, այդ ձեռնարկների ներկայության պատկերը, կատարվող նվիրատվությունները վկայում են, որ այն վայելում էր գաղութի մեծամասնության աջակցությունը։

Բյուրոյի անդամ Խաժակ Մկրտիչյանի ձեռնարկած բանակցությունները եւս կատարվում են մի քանի հանգրվաններով։ Ի վերջո, Սեպտեմբեր 15-ին բանակցությունները հանգուցալուծվում են եւ տագնապը մտնում է լուծման փուլ։ Այդ համաձայնության հիմնական կետերը հանդիսանում են.

Ա – Գործող եւ նշանակյալ Կ.Կ.-ների լուծարում եւ երկու կողմերից ընդունելի Կ.Կ.-ի կազմություն, որ պիտի գործի մէկ տարի ժամկետով, որից հետո պիտի գումարվի Արեւմտյանի Շրջանային Ժողով, նոր Կ.Կ. ընտրելու։

Բ – Երկու կողմերի դատական գործերից հրաժարում։

Գ – Տագնապի հետ առնչություն ունեցող կարգապահական բոլոր տնօրինումների չեղարկում։

Այս համաձայնության հիման վրա կազմվում է երկու կողմերին ընդունելի Կ.Կ., որ օրինական հանգամանք է ստանում նաեւ ամերիկյան դատարանի կողմից։ Իսկ ՀՅԴ Բյուրոն Հոկտեմբեր 19-ին

հաղորդագրությամբ հայտարարեց Արեւմտյանի տագնապի հանգուցալուծումը։

2023 թ-ի նոյեմբերի 6-ին, Բյուրոն տարածեց Մամլո Հաղորդագրություն, որում հայտնում է նոյեմբերի 2-3-ը Կիպրոսում տեղի է ունեցել խորհրդաժողով, որին մասնակցել են Դաշնակցության կառույցի մարմինների ներկայացուցիչները եւ հրավիրյալ ընկերները։ Ժողովին հատկացվել էր քննարկելու՝ «Ադրբեջանի կողմից ցեղասպանական հարձակումների հետեւանքով Արցախի Հանրապետության բռնի հայաթափումի լոյսի տակ Հայաստանի ու հայության առաջ ծառացած մեծ մարտահրավերները» ասվում է հաղորդագրության մեջ։ Այս խորհրդաժողովի ժողովականները հարց են դրել, որ կուսակցությունը կազմակերպականորեն հայտնվել է ճգնաժամում եւ առաջարկել են արտակարգ Ընդհանուր Ժողով գումարել։ Նախատեսվում է 2024 թ-ի աշնանը գումարել Դաշնակցութեան արտակարգ 35-րդ Ընդհանուր Ժողովը։

Ժողովականների կողմից կուսակցության ներսում ճգնաժամի գոյության անդրադարձը կարեւոր քայլ էր եւ հույս է ներշնչում, որ կազմակերպությունը կարող է դուրս գալ լճացումից, որում հայտնվել է մի տասնամեակից ի վեր՝ իր վարած սխալ քաղաքականության հետեւանքով։ Այս ճգնաժամի մասին զգուշացուցրել էին 2011 թ-ին պատգամավորները, որոնց բարեկարգչական առաջարկները Հրանտ Մարգարյանի կողմից մերժվել էին։ Այս ճգնաժամի մասին ահազանգել էր Արեւմտյանի Կ.Կ.-ն,

երբ Բյուրոն կասեցրել էր 55-րդ Շրջանային Ժողովի գումարումը: Բյուրոյի եւ Արեւմտյանի միջեւ ծագած տագնապը եւս այս ահազանգվող կազմակերպական ճգնաժամի դրսեւորումն էր: Դաշնակցության ղեկավարությունը իշխանական դիրքերի զինովությամբ փորձեց լուծել խնդիրները եւ այսօր ամբողջ կառույցը, նույնինքն մարմինների ներկայացուցիչների եւ Բյուրոյի հաստատումով գտնվում է ճգնաժամի մեջ, որից դուրս գալու ուղիները պետք է փնտռել կուսակցության արդիականացմամբ՝ քարացած աւանդականությունից եւ հեղափոխաշունչ ճառերից դուրս:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես մի քանի առիթներով շեշտեցինք, Արեւմտյանի այս ըմբոստացումը կազմակերպականորեն աննախընթաց էր: Նրա արձագանքները ոչ միայն հրապարակայնացան Դաշնակցական եւ ոչ Դաշնակցական մամուլում, այլեւ կուսակցությունը հայտնվեց մի անելի առաջ եւ ի վերջո Բյուրոն ընդունելով իր որոշման սխալականությունը, ետդարձ կատարեց դեկտեմբեր 27-ի Կենտրոնական Կոմիտե նշանակելու իր հայտարարություն-որոշումից: Բյուրոյի կողմից այս ետդարձը ինքնին ապացույց է, որ շարժումը հաջողեցաւ ինքզինք պարտադրել եւ կարող է Դաշնակցության կանոնագրին սկզբունքներին վերադարձի ազդանշանը տալ: Այս առումով էլ շարժումը պետք է նկատել հաջողած կամ առնվազն իր նպատակները իրագործած, որովհետեւ շարժումը առաջին օրից անջատողական տրամադրություն չցուցաբերեց եւ ինքը եղավ բանակցությունների նախաձեռնողը, որպեսզի կանոնագրային այն սկզբունքները՝ ապակենտրոնացում եւ ժողովրդավարություն, որոնք նվիրագործելու համար ճամբա էր դուրս եկել, նաեւ դառնա այն խարիսխը, որի վրա պիտի կառուցվեր ամեն տեսակի համաձայնություն:

Շարժումը հաջողվե՞ց։ Անկասկած։ Նրա գաղափարական-կազմակերպական եւ քաղաքական սկզբունքները բնական շարունակությունն են 2011 թ-ի 31-րդ Ընդհանուր Ժողովի բարեկարգչական առաջարկներին, որոնք ներկայացվել էին Արեւմտյանի եւ նրա համախոհ մի շարք այլ շրջանների պատգամավորների կողմից։ Առաջարկներ, որոնք հաջորդ Ընդհանուր Ժողովներին էլ ներկայացվեցին Արեւմտյանի կողմից։ Տասնամյակ հետո միայն, Բյուրոն հաստատեց, որ կուսակցությունը բարեկարգումի անհրաժեշտություն ունի եւ երկար տարիներ անտեսել է այդ կարեւոր քայլին գնալ։ Եւ այդ բարեկարգման պատկերացումներն ու առաջարկները, ըստ էության, խորքային պատճառ էին Արեւմտյանի ըմբոստացման։ Դեռ երկար ժամանակ նրա հետցնցումները զգալի պիտի լինեն կազմակերպությունում, որի առաջին ցուցանիշը 2023 թ-ի հոկտեմբերին Կիպրոսում տեղի ունեցած շրջանային ժողովն էր։ Այս իմաստով էլ, պատմության համար պետք է արձանագրել, որ շարժումը իր առաքելությունը կատարեց։

Արդեն մի քանի ամիս է անցել հաշտեցման համաձայնությունից, սակայն Արեւմտյանում կրքերը ամբողջությամբ չեն հանդարտվել։ Բյուրոն վերսկսել է իր միջամտությունները կատարել շրջանում, հետապնդելով միեւնույն քաղաքականությունը՝ վերահսկելի դարձնել Արեւմտյանը։ Այս աշխատության պատրաստության ընթացքում արդեն տեղեկանում ենք, որ Բյուրոն ամբողջությամբ չի հարգում իր իսկ ստորագրած համաձայնագիրը՝ պատրվակներ առաջ քաշելով։ Դաշնակցական

մարմնին անհարիր ընթացք է իր ստորագրությունից ետդարձ կատարելը։ Որքանո՞վ կհաջողի Բյուրոն այս անգամ, ժամանակը կտա պատասխանը։ Բայց բյուրոյական այս քաղաքականությունը, որ հանգեցուց 2020 թ-ի դեկտեմբերի ըմբոստացմանը, այս անգամ կարող է ավելի մեծ ավերներ գործել թե՛ կազմակերպությունում եւ թե՛ գաղութում։ Ակնկալում ենք, որ Հ.Յ.Դ. Բյուրոն ունենա խոհեմություն եւ Դաշնակցական մեծահոգություն՝ Արեւմտյանի հարցերին չմիջամտելու, նոր եւ անախորժ այլ բարդություններ կանխելու եւ Դաշնակցության հեղինակությունը վերականգնելու։

(վերջ)